

ՀԱՄԻԴԵԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ
Ի. ԴԱՐԻ ՍԿԶԲԻ
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԵԱՆ
ՔՆՆԱԿԱՆ ԼՈՅՍԻ ՆԵՐՔՈՅ

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՕՂՈՍԵԱՆ
varuzhan_poghosyan@yahoo.com

ՄՈՒՏՔ

Պատմագիտութեան առանձին մասնաճիւղի վերածուած Հայոց Յեղասպանութեան պատմութիւնն աւելի քան հարիւր տարի գտնուել է տարբեր երկրների պատմաբանների ուշադրութեան կենտրոնում: Թէպէտ այսօր հրապարակի վրայ առկայ է հարուստ եւ բազմաբնոյթ պատմագիտական գրականութիւն, այդուհանդերձ, մինչեւ վերջերս չէին լուսարանուել տարբեր երկրներում պատմագիտական մտքի նուաճումներն ու ելեւէջները Հայոց Յեղասպանութեան ուսումնասիրութեան ասպարէզում:

Երկար ժամանակ ստուերում էր մնացել նաեւ Հայոց Յեղասպանութեան Ֆրանսիական պատմագրութեան արժէքաւոր ներդրումը, որն առանձնանում է վաղեմի աւանդոյթներով: Սոյն յօդուածում քննական վերլուծութեան կ'ենթարկենք Հայոց Յեղասպանութեան Ա. փուլի (1894-1908)՝ համիդեան կոտորածների ուսումնասիրութեան բնագաւառում Ի. դարի 10ականներին, մանաւանդ՝ երիտթուրքերի իշխանութեան ժամանակաշրջանում Ֆրանսիական պատմագրութեան ներդրումը: Չյաւակնելով հանդերձ, որ պատմագիտական այդ գրականութիւնն սպառիչ կերպով ենք ընդգրկել, այս յօդուածով կ'ամբողջացնենք ԺԹ. դարի վերջի եւ Ի. դարի սկզբի՝ Հայոց Յեղասպանութեան Ֆրանսիական պատմագրութեանը նուիրուած մեր աշխատանքները²:

Սոյն յօդուածում քննարկուող հեղինակները Ֆրանսիական պատմագրութեան որոշակի դպրոցների կամ ուղղութիւնների ներկայացուցիչներ չեն: 1894-1908ի հայկական կոտորածների պատմութեանը նրանք յատկացրել են շատ աւելի նուազ ուշադրութիւն, քան իրենց նախորդները: Նրանք այդ պատմութեան անդրադարձել են գլխաւորապէս Հայոց Յեղասպանութեան սկզբնական շրջանի տարբեր դրսեւորումներին, կամ միջազգային յարաբերութիւնների պատմութեանը նուիրուած իրենց ընդհանուր բնոյթի աշխատութիւններում: Հարկ է, անտարակոյս, հաշուի առնել, որ քննարկուող ժամանակատահուածում խօսքը չի վերաբերում ձեւաւորուած պատմագրութեան, բռնի դասական իմաստով: Այս ժամանակաշրջանում Ֆրանսիայում կատարուում էին Հայոց

Յեղասպանութեան պատմութեան ուսումնասիրութեան դեռեւս առաջին քայլերը, որոնք արհեստավարժ պատմաբանների կողմից չէին իրականացուում: Այստեղ քննարկուող ուսումնասիրութիւնների հեղինակները տարբեր մասնագիտութիւնների տէր անձինք են՝ գրողներ, իրաւաբաններ, հոգեւոր գործիչներ, ինչպէս նաեւ պատմաբաններ: Ուստի եւ նրանք հարցերը քննարկել են տարբեր կարուածքներով, մանրամասնօրէն (Ա. Բարր, Ֆ. Սուրբեզի), կամ՝ սոսկ իրենց հետաքրքրող տեսանկիւնից (է. Լեմոնոն եւ այլք): Այդուհանդերձ, այս հեղինակների աշխատութիւնները եւս ձեռք են բերում պատմագիտական նշանակութիւն եւ արժանի են ուշադրութեան, առաւել եւս, որ դրանք Հայոց Յեղասպանութեան պատմութեան ժխտողների թեզերին անուղղակիօրէն տալիս են արժանի հերքում: Դրանով է պայմանաւորուում նրանց աշխատութիւնների այժմէականութիւնը:

ANDRÉ BARRE, L'ESCLAVAGE BLANC. (ARMÉNIE ET MACÉDOINE)

Քննարկուող ժամանակաշրջանում Հայկական Հարցի եւ Հայոց Յեղասպանութեան առաջին փուլի պատմութեանը նուիրուած պատմագիտական գրականութեան յետնախորքի վրայ բազմազան հիմնահարցերի ընդգրկմամբ եւ քննական վերլուծութեամբ աչքի է զարնում գրող Անդրէ Բարրի *L'Esclavage Blanc. (Arménie et Macédoine)* (Սպիտակ ստրկութիւն (Հայաստան եւ Մակեդոնիա) գիրքը: Այս արժէքաւոր աշխատութիւնը գրի է առնուել, ըստ հեղինակի վկայութեան, 1908ին՝ 1876ի օսմանեան սահմանադրութեան վերահաստատումից յետոյ:

Ելնելով նիւթի շարադրանքից, կարելի է անվարան հաւաստել, որ հեղինակն այն աւարտին է հասցրել մինչեւ 1909ի սուլթանական յեղաշրջումը եւ դրա ճնշումը սահմանադրական զօրքերի կողմից:

Գրքի վերնագիրն իսկ երկմտանքի տեղիք չի տալիս այլազգի հպատակների հանդէպ օսմանեան վարչակարգի քաղաքականութեան շուրջ Բարրի կեցուածքի մասին: Ելնելով ԺԹ. դարում Օսմանեան կայսրութիւնում տարբեր ասպարէզներում (վարչական, ֆինանսական, իրաւական եւն.) տիրող խառնաշփոթից, Բարրն իրավիճակը բնորոշում է իբրեւ «անարխիա», որը յանգեցնում է բնիկ ժողովուրդների համար անվտանգութեան կատարեալ բացակայութեան եւ չի երաշխաւորում նրանց ունեցուածքի ապահովութիւնը⁵:

Բարրն օսմանահպատակներին առհասարակ, անկախ ազգային պատկանելութեան եւ դաւանանքների տարբերութեան՝ բնորոշում է իբրեւ «սպիտակ ստրկութեան» գոհերի, քանզի օսմանեան վարչակարգը նրանց կատարեալ կախման մէջ էր դրել պաշտօնեաներից: Այս առումով, Բարրը նրանց թւում իրաւամբ առանձնացնում է քրիստոնեաների առաւել վատթար կացութիւնը, քանի նրանք կրում էին «անարկունքեան» յի ամբողջ ծանրութիւնը եւ ի տարբերութիւն դանդաղ հոգե-

վարք ապրող մահմեդականի՝ նահատակում էին⁴։ Օսմանահպատակ մահմեդականների եւ քրիստոնեաների միջեւ առկայ զգալի տարբերութիւնների յստակ ընդգծումը պայմանաւորուած է գլխաւորապէս Բարրի հայեցակարգի ակնյայտ սահմանափակուածութեամբ։ Այդ սահմանափակուածութիւնը խարսխուում է թուրքերի կրօնական մոլեռանդութեան եւ քրիստոնեաների հանդէպ նրանց մէջ արմատացած խորին ատելութեան վրայ։ Սա իրականութեանը մասամբ էր համապատասխանում եւ իրադարձութիւնների ծաւալման վրայ այնպիսի վճռորոշ ազդեցութիւն չունէր, ինչպիսին ներկայացնում է Բարրը։

Բարրը քննարկում է Թանգիմաթի շրջանում օսմանեան գահակալների ընդունած՝ բարենորոգումների իրականացում նախատեսող փաստաթղթերը։ Նա դրանք բնորոշում է իբրեւ մակերեսային եւ անօգուտ փաստաթղթեր, որոնց մեկնաբանութիւնը, սակայն, յանիրաւի, սահմանափակում է միայն կրօնական հակամարտութեան շրջանակներում։ «Թուրքիայում ոչինչ չի փոխուել, քանզի ոչինչ չի կարող փոխուել։ Իսլամը նորանուծութիւնների հանդէպ թշնամական դիրքորոշում ունի»՝ այսպիսին է նրա հիմնական եզրայանգումը⁵։ Ըստ այդմ՝ կայսրութեան բազմամիլիոն բնակչութեան (այդ թւում մահմեդականների) վրայ երեք միլիոն «անուղղելի բարբարոսներ»ի՝ թուրքերի, տիրապետութիւնը, Բարրը, ելնելով իր ոչ-ընդգրկուն հայեցակարգից հիմնաւորում է յատկապէս Ղուրանի պատուիրաններով։ Ըստ նրա՝ մահմեդականների մօտ ամէն ինչ կանխորոշել է կրօնը, որն ի սկզբանէ կարգաւորել է ինչպէս անձնական կեանքում, այնպէս էլ քաղաքական ոլորտում տիրող բարքերը։ Մահմեդականը, ինչպէս նա պարզաբանում է, ընդդիմանում է իւրաքանչիւր բարենորոգման, քանզի այն ընդունում է իբրեւ իրեն քրիստոնեայից կախման մէջ դնելու միտուած քայլ, ինչը հեղինակն ամբողջութեամբ պայմանաւորում է նրան բնորոշ կրօնական նախապաշարմամբ⁶։ Մենք հակուած չենք թերագնահատելու այս անառարկելի իրողութեան նշանակութիւնը, սակայն, միաժամանակ հարկ ենք համարում նկատել, որ դա հարցի սպառիչ մեկնաբանութիւնը չէ, քանզի խօսքը շատ աւելի առնչում է պետականօրէն իրականացուող քաղաքականութեան, որի նպատակը հպատակեցուած ժողովուրդների շահագործումն էր եւ տնտեսական անողոք կեղեքումը։

Թէեւ այս էական փաստը Բարրն անտեսում է, այդուհանդերձ, նախքան Հայոց Յեղասպանութեան առաջին փուլի պատմութեան քննարկմանն անդրադառնալը, նա անկողմնակալ դիրքերից հանգամանօրէն վերլուծում է արեւմտահայութեան վիճակն Օսմանեան կայսրութիւնում։ Բարձր կարծիքներ յայտնելով հայ ժողովրդի ունակութիւնների եւ տարբեր ասպարէզներում (գիւղատնտեսութեան, առեւտրի) նրա ծաւալած գործունէութեան մասին, նա հայերին համարում է կայսրութեան ժողովուրդներից ամենատաղանդաւորը։

Քրիստոնեաների հանդէպ տիրապետող ժողովրդի մօտ արմատացած արհամարհական վերաբերմունքը Բարրը ուղղակիօրէն լուսարանում է օսմանեան լծի տակ հեծող արեւմտահայութեան օրինակի հիման վրայ: Թուրքերը հային դիտում են - ըստ նրա դիպուկ բնորոշման - իբրեւ «ժարկատու ստրուկ»⁸: Այս հենքի վրայ՝ հերթական անգամ շեշտելով հոգեբանական գործօնի նշանակութիւնը, նա հաւաստում է, որ հայերին հալածելը եւ նրանց աշխատանքի արդիւնքները իւրացնելը թուրքերը համարում են բարոյական եւ պատուաբեր: Միեւնոյն՝ հայերին իբրեւ ստորադասի վերաբերուելու շրջանակում է հեղինակը քննարկում նաեւ նրանց համար ստորացուցիչ այնպիսի իրողութիւններ, ինչպիսիք են գէնք կրելու, ձի հեծնելու արգելքը եւն.⁹:

Խիստ կարեւոր են արեւմտահայութեան տնտեսական ծանր կեղեքմանը միտուած օսմանեան իշխանութիւնների քաղաքականութեան շուրջ Բարրի հաւաստումները: Հեղինակը այն մանրագնին մեկնարանում է օսմանեան վարչական եւ դատական համակարգերի կողմից արեւմտահայութեան հանդէպ կիրառուող զանազան բռնութիւնների, մասնաւորապէս բազմապիսի հարկերի հենքի վրայ¹⁰: Հայերի հանդէպ տնտեսական քաղաքականութիւնն անուանելով «պաշտօնական աւազակութիւն», Բարրն ընդգծում է նաեւ քրդերի կողմից նրանց նկատմամբ գործադրուող բռնութիւնները, կողոպուտներն ու կոտորածները եւ յանգում հետաքրքիր հետեւութեան. «Հայերի համար արդիւնքում առկայ է հարկերի անվերջանալի բազմապատկում եւ նրանց առջեւ յարձակում է ծաւալման հեռանկարներ ունեցող բնաջնջում»¹¹: Այլ խօսքերով, նա հայերի բնաջնջման քաղաքականութիւնը դիտում է իբրեւ արեւմտահայութեան հանդէպ օսմանեան վարչակարգի կիրառած քաղաքականութեան օրինաչափ շարունակութիւն: Նման մօտեցումը բացառում է Յեղասպանութիւնն իրականացրած օսմանեան պաշտօնեաների եւ յետագայում նրանց հետքերով՝ պատմութեան կեղծարարների փատարկների արժանահաւատութիւնը, թէ՛ օսմանեան պետութեան կողմից հայկական կարծեցեալ յեղափոխական շարժումները հարկադրաբար ճնշելու անհրաժեշտութեան հետեւանքով էին կիրառուած բռնութիւնները:

Հեղինակին յաջողուել է բացայայտել նաեւ արեւմտահայութեան հանդէպ իրաւական դաշտում կիրառուող ազգային խտրականութեան քաղաքականութեան դրսեւորումները, քանզի, ինչպէս միանգամայն իրաւամբ շեշտում է՝ հային թոյլատրուած է եղել զանգատուել, սակայն, միայն տեսականօրէն: Իրականում, օսմանեան արդարադատութիւնը նրան շրջանցում է¹²: Արդիւնքում՝ Բարրը հաւաստում է, որ մինչեւ 1870ականներն արեւմտահայութեան համար չեն եղել ո՛չ ունեցուածքի եւ ո՛չ պատուի ապահովութեան երաշխիքներ: Նա շեշտում է

նոյնիսկ այսպիսի պայմաններում գտնուող հայերին բնորոշ աշխատասիրութիւնը, որն, ի վերջոյ, յանգեցում էր նրանց դահիճներին կերակրելուն¹³ :

Այս ծաւալուն յեռնախորքի վրայ Բարրը մեկնաբանում է Հայկական Խնդրի միջազգայնացման խրթին հարցը, որը պայմանաւորում է 1877-1878ի ռուս-թուրքական պատերազմին յաջորդած բանակցութիւններով եւ հայերի՝ իրենց անմխիթար կացութիւնը բարելաւելու ուղղութեամբ գործադրած ջանքերով: Սակայն, ի տարբերութիւն արեւմտահայութեան կացութեան հանգամանքների մանրագնին եւ համակողմանի քննարկմանը, Հայկական Հարցի ծագման առնչութեամբ նրա մեկնաբանութիւնները խիստ թերի են եւ հեռու՝ սպառիչ լինելուց: Ակնարկելով Սան Ստեֆանոյի պայմանագրում՝ Օսմանեան կայսրութիւնում հայ ժողովրդի իրավիճակի բարելաւում նախատեսող 16րդ յօդուածին, Բարրը շրջանցում է դրա ամենակարեւոր դրոյթը՝ Բարձր Դռան բարենորոգումների իրականացման գործընթացի շուրջ Ռուսաստանի առջեւ հաշուետու լինելը: Ուստի, օրինաչափ է, որ նա յանգում է պատմական իրականութեանն ակնյայտօրէն հակասող անընդունելի եզրակացութեան: Բարրը պնդում է, որ տէրութիւններն այս յօդուածով յոյսեր էին կապում Թուրքիայի բարի կամքի դրսեւորման հետ, ինչը, նրա կարծիքով, «հաւասարագօր էր բարենորոգումների յուղարկատրութեանը»¹⁴ : Իրականում պատկերը փոքր-ինչ այլ էր, քանզի 16րդ յօդուածով սահմանուած՝ օսմանեան վարչակարգի հանդէպ Ռուսաստանի վերահսկողութեան կիրառման պայմաններում, նախատեսուած գործընթացը կարող էր յանգեցնել շօշափելի արդիւնքների:

Փոխարէնը, Բարրի գնահատականները միանգամայն ընդունելի են Բեռլինի վեհաժողովին նախորդած ժամանակաշրջանում տէրութիւնների դիրքորոշման առնչութեամբ, որոնք դէմ էին Օսմանեան կայսրութիւնում Ռուսաստանի ազդեցութեան աճին: Որքան տարօրինակ է, այս հարցում արդէն Բարրն արժեւորում է 16րդ յօդուածի նշանակութիւնը, որը, ինչպէս նա նշում է, Հայկական Նահանգներում ապահովում էր Ռուսաստանի գերակշռող ազդեցութիւնը¹⁵ :

Հեղինակը մանրամասն նկարագրում է Բեռլինի վեհաժողովի գումարումն ու ընթացքը եւ գտնում, որ հայերի գործունէութիւնն անհետեւանք չի անցել. «Սան Ստեֆանոյի պայմանագրի 16րդ յօդուածը դարձել է Բեռլինի պայմանագրի 61րդ յօդուածը»,- նշում է նա¹⁶, շրջանցելով դրանց միջեւ առկայ էական զանազանութիւնները, որոնք կապուած են Բարձր Դռան նկատմամբ վերահսկողութեան սահմանման: Այս փաստն, ինքնին, վկայում է, որ նա, ըստ էութեան, չի ըմբռնել ծագման փուլում Հայկական Հարցի իրական իմաստը, ամբողջութեամբ չի կողմնորոշուել դրա առաջացման պատմական հանգամանքներում: Այս պայմաններում, պատահական չէ, որ 1870ականների

գիւանագիտական յարաբերութիւնների քննարկման առնչութեամբ նա նոյնիսկ չի օգտագործում «Հայկական Հարց» արտայայտութիւնը, ինչն արդէն նրա մօտեցման ակնառու թերութիւնն է: Ի դէպ, հեղինակն առաջին անգամ այն օգտագործում է միայն Հայկական կուսակցութիւնների գործունէութեան վերլուծութեան առնչութեամբ¹⁷:

Բարենորոգումների խնդիրը եւս Բարրը քննարկում է սահմանափակ կտրուածքով, ցաւով մատնանշելով, որ Բեռլինի վեհաժողովից երկու տարի անց Բարձր Դուռն «իրական» բարենորոգումների իրականացման ուղղութեամբ ոչ մի քայլ չի ձեռնարկել եւ սոսկ պահպանել է status quoն: Այս առնչութեամբ Բարրը փաստում է սոսկ Բարձր Դուռն խորամանկ քաղաքականութեան ելեւէջները, չբացայայտելով, սակայն, դրանց իրական պատճառները: Իրականութեանն ամբողջութեամբ համապատասխանող նրա որոշ մեկնաբանութիւնները յանգում են հետեւեալին՝ Բարձր Դուռն վարած քաղաքականութիւնը պարզորոշ վկայում է, որ համիդեան վարչակարգի իրական ծրագրերը համահունչ չեն եղել Յըրդ յօդուածի ոգուն: Օսմանեան կառավարութեանը նա մեղադրում է ցուցադրական զիջումների դիմելու մէջ, որի նպատակը երկրում խառնաշփոթի պահպանումն էր՝ բացառապէս ձեւական փոփոխութիւնների քողի տակ: «Բարենորոգումները զուտ պատրանքային բնոյթ ունէին»՝ եզրակացնում է նա¹⁸: Այդուհանդերձ, նրա մեկնաբանութիւնները պարզորոշ վկայում են, որ Արեւմտեան Հայաստանի համար նշուած միջազգային պայմանագրերով նախատեսուած բարենորոգումների տապալման հանգամանքները նրա համար մնացել են անհասանելի:

Բացայայտօրէն եւ անհարկի գերազնահատելով Բրիտանիայի հայամէտ քաղաքականութեան նշանակութիւնը, նա կարծիք է յայտնում, թէ իբր յանձինս Բեռլինի վեհաժողովի եւ 1878 Յուլիսի 4ին Բրիտանիայի եւ Օսմանեան կայսրութեան միջեւ կոստանդնուպոլսում կնքուած պայմանագրերի՝ հայերն ունէին Արեւմտեան Հայաստանում բարենորոգումների իրականացման երկու երաշխիք¹⁹: Բարենորոգումների ձախողումը նա մեկնաբանում է գլխաւորապէս երկրորդական բնոյթի պատճառներով, ինչպիսիք են հայերի՝ վերոյիշել կարծեցեալ երկու երաշխիքի գոյութիւնը, կամ կրօնական մոլեռանդութիւնը, որի հետեւանքով մահմեդականները եւրոպական պետութիւնների միջամտութիւնները դիտել են իբրեւ իրենց կրօնական աւանդոյթների դէմ ուղղուած բացայայտ ռոնձգութիւն²⁰: Արդիւնքում, Բարրը չըջանցում է բարենորոգումների ձախողման հիմնական պատճառը՝ եւրոպական տէրութիւնների շահերի մրցակցութիւնը:

Փոխարէնը, սակայն, սուլթանի եւ մեծ տէրութիւնների փոխյարաբերութիւնների վերլուծութեան հարցում նրա մեկնաբանութիւնները շատ աւելի ընդգրկուեն են եւ արժանի՝ ուշադրութեան: Այս հարցում նա ծաւալւում է Արդուլ Համիդի դիրքորոշման շուրջ, որը 1880ականների

երկրորդ կէսին հմտորէն օգտագործում էր տէրութիւնների անվճռականութիւնը, քանզի գիտակցում էր իր գործած ոճիրների անպատեւիութիւնը: Ուստի, նա վճիռ է կայացնում կազմակերպել «Ղայնաժաւալ կոտորածներ, որոնք արժանի են կայսրին»²¹: Հեգնարար եզրակացնում է հեղինակը: Այս իրողութիւնը Բարրը համարում է, փաստորէն, Հայոց Յեղասպանութեան նախադրեալներից, որի պատասխանատուութիւնն անուղղակիօրէն բարդում է սուլթանից զատ նաեւ եւրոպական պետութիւնների իշխանութիւնների վրայ:

Ընդգծելով ստանձնած պարտաւորութիւնների կատարման հարցում օսմանեան գահակալի յապաղումները, Բարրը նման դիրքորոշումը մեկնաբանում է իբրեւ գիտակցուած քայլ, որը միտուած էր մեծ տէրութիւնների միացեալ գործողութիւնների ջլատմանը: Այս առումով, հեղինակը գտնում է, որ սուլթանը յիրաւի հասել է իր նպատակին, քանզի Բարձր Դուռն արեւմտահայութեան համար բարենորոգումների իրականացման քայլերի չի դիմել²²:

Բարրի շարադրանքում Հայկական Հարցին առնչուող հիմնախնդիրների քննարկումը ակնյայտօրէն դրսեւորւում է պատճառակցական կապի մէջ, որը նրա մօտեցման դրուատելի կողմերից է: Նա հիմնաւորապէս հերքում է հայերի վրայ յաճախ բարդուող՝ իրականութեանը չհամապատասխանող այն զրպարտութիւնը, թէ՛ հայերը ձգտել են անկախութեան: Փոխարէնը նա պարբերաբար ընդգծում է տասնամեակներ շարունակ նրանց անտրտունջ պահուածքը²³: Ապացուցելու համար, որ հայերի պահանջները յեղափոխական բնոյթ չեն կրել, նա հրապարակում է 1878 Յունիսի 13/25ին Բուլինում Խրիմեան Հայրիկի՝ տէրութիւնների ներկայացուցիչներին յանձնած խնդրագիրը, ինչպէս նաեւ երկու այլ փաստաթղթեր՝ «Մրազիր կազմակերպական Կանոնագրի Օսմանեան Հայաստանի» եւ «Վիճակագիր Օսմանեան Հայաստանի», որոնք հայ պատուիրակները յանձնել էին վեհաժողովի նախագահին²⁴: Ելնելով արեւմտահայութեան համար ստեղծուած կացութեան առանձնաշատկութիւններից, նա յանգում է միակ հնարաւոր հետեւութեան, պնդելով, որ հայերին երկընտրանքի առջեւ կանգնեցրել են տէրութիւնների անպտուղ գործողութիւնները. «Ազգերի կողմից լքուած՝ Հայաստանն այսուհետեւ կարող էր յոյսեր կապել միայն սուլթանի բարեացակամութեան վրայ կամ յենուել իր սեփական ուժերի վրայ»՝ գրում է նա²⁵: Ուստի, 1880ականների կէսերին նոր սերնդի կողմից «յեղափոխական մարտավարութեան» որդեգրումը նա գերադասում է մեկնաբանել սոսկ պայքարի խաղաղ ձեւերի անարդիւնաւէտութեամբ²⁶:

ՄԴՀ եւ ՀՅԴ կուսակցութիւնների կազմաւորումը հեղինակը պայմանաւորում է բացառապէս հայերի, մասնաւորապէս երիտասարդութեան՝ ինքնապաշտպանութիւն կազմակերպելու անհրաժեշտութեան գիտակցմամբ: Նա բացառում է Յեղասպանութեան ժխտողների հիմ-

նական տեսակէտներից մէկը՝ յեղափոխական գաղափարներին՝ հայերի տուրք տալու հաւանականութիւնը: Երկու կուսակցութիւնների հիմնական նպատակը Բարրը համարում է օսմանեան վարչակարգի բռնութիւնների շուրջ քաղաքակիրթ աշխարհին հաւաստի տեղեկութիւնների հաղորդումը եւ ըմբոստութիւնների հրահրումը Հայաստանում, սակայն, էական մի վերապահութեամբ՝ եւրոպական ազդեցիկ միջամտութեան ակնկալութեամբ²⁷:

Այդուհանդերձ, Բարրը եւս մէկ անգամ ընդգծում է, որ հայերը, կանխազգալով վերահաս կոտորածների անխուսափելիութիւնը եւ նախքան յեղափոխական գործողութիւնների հարկադրաբար դիմելու վճռի կայացումը, ջանացել են հայցել Մեծն Բրիտանիայի աջակցութիւնը, որը ոչնչի չի յանգեցրել²⁸:

Մեծն Բրիտանիայի քաղաքականութեանը տուած անկողմնակալ այս գնահատականը, ըստ էութեան, հակասում է նրա նախորդ դիտարկումին եւ վկայում, որ հեղինակը այս հարցում եւս յստակ կողմնորոշում դեռեւս չի ունեցել: Իսկ ինչ վերաբերում է արեւմտահայութեանը, Բարրն իրաւացիորէն փաստում է, նոյնիսկ այս պայմաններում, հնչակեանների՝ հարուածին հարուածով պատասխանելու հարցում գրաւած ժխտական դիրքորոշումը: Այդուհանդերձ, մատնանշելով հայերի՝ բռնակալութեան վրայ խաղաղ միջոցներով ներգործելու ապարդիւնութեան փաստը, նա յանգում է միակ հնարաւոր տրամաբանական հետեւութեան. «Այսօր, ինչպէս եւ նախկինում, միայն յեղափոխութիւնն է շնորհում կեանքի իրաւունքը»²⁹:

Հեղինակը մանրամասն քննարկում է Սասունի ապստամբութեան հանգամանքները, սակայն, այս հարցում եւս ցուցաբերում է փոքր-ինչ անհետեւողականութիւն: Օրինակ, ակնարկելով հայկական ըմբոստութիւններին, նա ոչ միայն չի մեկնաբանում դրանց անմիջական դրդապատճառները, այլեւ, յանիրաւի, դրանք բնորոշում է իբրեւ անողոք ճնշման յանգեցրած յեղափոխութիւն: Փոխարէնը, Սասունի ապստամբութեան առնչութեամբ Բարրը իրաւացիորէն մեկնաբանում է ամենաէական տուեալը՝ Արդուլ Համիդի ղեկավար դերը դրա ճնշման հարցում: Արդարեւ, սուլթանը անձամբ կարգադրել էր օսմանեան գորքերի հրամանատար Զեքի փաշային՝ արեան մէջ խեղդել հայկական ապստամբութիւնը: Ապստամբների աննախադէպ խոշտանգումների, սպանութիւնների ծաւալի հիման վրայ, Բարրը մատնանշում է օսմանեան գորքերի հիմնական նպատակը, որ՝ «հայկական կոտորածները ոչնչով չզիջեն պատմութեան մէջ արձանագրուած մեծ կոտորածներին»³⁰:

1895 Սեպտեմբերի 30ին Կոստանդնուպոլսում հայերի կազմակերպած՝ բարենորոգումների գործադրման ուղղուած ցոյցը Բարրը պատճառաբանում է բարենորոգումների «մայիսեան» ծրագրի գործադր-

ման հարցում Բարձր Դուան ցուցաբերած չկամութեամբ³¹։ Անկողմնակալ դիրքերից մեկնաբանելով հնչակեանների հիմնական նպատակը՝ տեղեկացնել օսմանեան իշխանութիւններին, որ հայերն այլեւս ցանկութիւն չունեն խաբուել դատարկ խոստումներով, հեղինակն այս պարագայում եւս անուշադրութեան չի մատնում նրանց մօտ ապստամբելու կամ խառնակչութիւններ կազմակերպելու մտադրութեան բացակայութիւնը³²։

1895ի ցոյցին յաջորդած իրադարձութիւնների առնչութեամբ (տէրութիւնների միջամտութիւն, սուլթանի՝ Հոկտեմբերի 17ի հրովարտակով բարենորոգումների իրականացման սին խոստումների շոայլում), Բարրին յաջողուել է ամբողջ խորութեամբ բացայայտել Աբդուլ Համիդի հայատեաց քաղաքականութեան իրական դիմագիծը։ Տէրութիւններին խաբելով, ինչպէս նա հիմնաւորապէս ապացուցում է, սուլթանն ամբողջ կայսրութեան տարածքում գաղտնաբար կազմակերպում էր լայնածաւալ հայկական կոտորածներ, տարբեր վայրեր ուղարկում իր բանագնացներին՝ տեղերում գտնուող իր ներկայացուցիչներին կարգադրելով կոտորել հայերին։ Աբդուլ Համիդի բանագնացները՝ «Ռճրի պատգամատրները»³³, գրգռում էին թուրք եւ քուրդ մահմեդականների ատելութիւնը «գեաւուրներ»ի նկատմամբ, բորբոքում նրանց կրօնական մոլեռանդութիւնը, պաշտօնեաններին կարգադրում իրականացնել քրիստոնեայ հպատակների համընդհանուր կոտորած³⁴։ Թէ՛ այս եւ թէ՛ տարատեսակ այլ փաստերի վկայակոչմամբ Բարրը բացայայտում է հայ ժողովրդի դէմ ցեղասպանութեան կազմակերպումը իբրեւ պետական քաղաքականութիւն։ Սա նրա ամենամեծ արժանիքն է։

Հեղինակը մասնաւորապէս ընդգծում է օսմանեան տեղական իշխանութիւնների դերը հայերի բնաջնջման կազմակերպման գործընթացում. «Ամէնուր իշխանութիւնները դրդում են մահմեդականներին՝ գործել քրիստոնեաների դէմ։ Որոշ վայրերում դրանք նոյնիսկ դիմում են քրդական հրոսակախմբերի օգնութեանը»՝ նշում է նա³⁵։ Իսկ Դիարբեքիում տեղի ունեցած կոտորածների հիման վրայ, Բարրն արդէն յանդում է շատ աւելի հատու եզրակացութեան, հաւաստելով, որ հայկական ջարդերը վկայում էին «թէ ինչ չափով են իշխանութիւններն օժանդակում մարդասպանների գործողութիւններին»³⁶։

Բարրի մօտեցման առանձնաշատ կութիւններից է Աբդուլ Համիդի գահակալութեան օրօք Հայոց ցեղասպանութեան գործընթացի յարատեւութեան փաստումը 1890ականների լայնածաւալ կոտորածներին յաջորդած ժամանակահատուածում։ Անդրադառնալով Արեւմտեան Հայաստանում եւ կից զանազան բնակավայրերում (Ուրֆա, Էրզրում եւ այլուր) մինչեւ 1904 տեղի ունեցած կոտորածներին, հեղինակը հայերի մարդկային կորուստները չի համեմատում 1894ի Սասունում եւ դրան յաջորդած իրադարձութիւնների ընթացքում նրանց տուած մարդկային

ահուելի կորուստների հետ: Այդուհանդերձ, նա մանրամասն քննարկում է ոչ միայն 1904ի Սասունի կոտորածները, այլև արեւմտահայութեան դէմ ուղղուած ցեղասպանային բնոյթ կրող՝ օսմանեան վարչակարգի քաղաքականութեան այլեւայլ դրսեւորումները (մարդկանց խոշտանգումներ, անօրինականութիւններ բանտերում եւն.)³⁷:

Շրջանցելով Հայոց Յեղասպանութեան պատճառների գերակշռող մասը (մասնաւորապէս, Հայկական Հարցին լուծում տալու անհրաժեշտութիւնը, բռնի օսմանացման քաղաքականութեան ձախողումը), ինչը նրա վերլուծութեան խոցելի կողմերից է, Բարրը հիմնաւորապէս բացայայտում է, փաստօրէն, դրանցից միայն մէկը՝ Արեւմտեան Հայաստանի հայաթափումը: Այս առումով նա նշաւակում է Արդուլ Համիդի վարած քաղաքականութիւնը: Հեղինակը հաստատում է որ կոտորածների եւ անօրինակ հալածանքների պատճառով հայերի արտագաղթը տարբեր երկրներ հետեւանք է հայերին համակած յուսալքութեան: Նա միաժամանակ մատնանշում է սուլթանի ջանքերը՝ հայերին պատկանող պատմական տարածքները մահմեդականներով բնակեցնելու՝ մի փաստ, որը նրա ժամանակակից Ֆրանսիացի պատմաբաններից շատերի ուշադրութիւնից վրիպել է:

Ի վերջոյ, Բարրը մարդասպանների անկաշկանդ գործողութիւններն իրաւամբ մեկնաբանում է մահմեդականների մօտ արմատացած անպատեխիութեան զգացումով, ինչն, անտարակոյս, եւս մէկ անգամ հարեւանցիօրէն հաւաստում է Հայոց Յեղասպանութեան իրականացումը պետական մակարդակով՝:

Հայ ժողովրդի ողբերգութեան հարցում Բարրը խստագոյնս դատապարտում է եւրոպական մեծ տէրութիւնների անտարբեր դիրքորոշումը: Նա առանձնացնում է յատկապէս պատմական այս ժամանակաշրջանում Ֆրանսիայի ամենի հակառակորդ կայզերական Գերմանիային, որը - ինչպէս պատկերաւոր ձեւով նշում է - «իր սրով պատսպարում է թուրքերի յանցանքները»⁴⁰: Նրա մտորումներում բացայայտօրէն նկատելի է հակազերմանական տրամադրուածութիւնը, ինչն Առաջին Համաշխարհային Պատերազմի տարիներին միանգամայն բնորոշ է Ֆրանսիացի բոլոր հեղինակներին: Միւս կողմից, հեղինակը ձեռնպահ է մնում Ֆրանսիայի Գ. Հանրապետութեան ղեկավարների բացայայտ թրքամէտ քաղաքականութեան քննադատութիւնից: Ըստ նրա անիրատես հաշուարկների՝ 100.000ի հասնող հայերի մարդկային կորուստները հետեւանք են դիւանագիտութեան հետ կապուած նրանց ունայն յոյսերի: Իրականութեանը մասամբ համապատասխանող նրա այս եզրայանգումը պարունակում է միաժամանակ չափազանցութեան տարրեր: Տէրութիւններն ունեն իրենց պատասխանատուութեան մեծ բաժինը: Առիւծի բաժինը, սակայն, այս հարցում բարդուած է օսմանեան դահակալի վրայ, որի մշակած հայ ժողովրդի բնաջնջման ծրագիրը իրակա-

նացում էր պետական մակարդակով: Ինչպէս տեսնում ենք, թէեւ Բարրը բազում փաստերով հաւաստել է նման քաղաքականութեան կիրառումը, այդուհանդերձ, անկարող է գտնուել խուսափելու չափազանցութիւններին տուրք տալուց:

Բարրի մօտեցումն ակնյայտ առաւելութիւնների հետ մէկտեղ ունի նաեւ խոցելի կողմեր: Նա մանրագնին մեկնաբանում է արեւմտահայութեան կացութիւնը ԺԹ. դարի երկրորդ կէսին, հիմնաւորապէս բացայայտում Հայոց Յեղասպանութեան իրականացումը պետական քաղաքականութեամբ, հերքում հայերի կարծեցեալ ապստամբութեան վարկածը, սակայն դիւանագիտական յարաբերութիւնների վերլուծութեան եւ, մասնաւորապէս Հայկական Հարցի ծագման նրա մեկնաբանութիւնները խիստ թերի են: Ամէն դէպքում նրա գիրքը ոչ միայն նպաստել է Հայոց Յեղասպանութեան շուրջ հաւաստի տեղեկատուութեան տարածմանը, այլեւ նշանակալից ներդրում է, իր ժամանակի գիտութեան չափանիշների կտրուածքով, հարցի գիտական ուսումնասիրութեան ասպարէզում:

L'ABBÉE GRISELLE, UNE VICTIME DU PANGERMANISME : L'ARMÉNIE MARTYRE⁴¹

Համիդեան կոտորածների պատմութեանը մանրամասնօրէն անդրադարձել է նաեւ հոգեւոր գործիչ Աբբա Գրիգէլը, որն ի տարբերութիւն Բարրի, շեշտն ակնյայտօրէն դնում է իրադարձութիւնների նկարագրական կողմի վրայ: Այդուհանդերձ, նրա որոշ մեկնաբանութիւններն արժանի են ուշադրութեան:

Հեղինակը հիմնւում է հաւաստի, մասնաւորապէս Ֆրանսիական սկզբնաղբիւրների վրայ, յաճախակի յղում Ֆրանսիայի Արտաքին Գործերի Նախարարութեան արխիւի վաւերագրերն ամփոփող *Դեղին Գիրքը*, որից մէջբերում է ընդարձակ քաղուածքներ:

Աբբա Գրիգէլն ընդգծում է «ստրկացման քաղաքականութեան շարունակականութիւնը, որը հետեւողականօրէն իրականացուել է յօգուտ գերագանցութեան յաւակնող ազգութեան» եւ, ինչպէս Բարրը, փաստարկում է հայ ժողովրդի բնաջնջման գործընթացի յարատեւութիւնը⁴²:

Հայոց Յեղասպանութեան պատմագրութեան մէջ բուռն բանավէճեր յարուցած այս հիմնախնդրի⁴³ հանդէպ նման մօտեցումը բխում է Հայկական Հարցի շուրջ հեղինակի որդեգրած իրատես հայեցակարգից: Հայկական Հարցի ծագումը նա շողկապում է 1870ականներին տեղի ունեցած դիւանագիտական բանակցութիւններին: Ի տարբերութիւն մեծաթիւ ժամանակակիցների, ներառեալ՝ Բարրի, հեղինակը թափանցում է հարցի ծագման ակունքներին: Նա յստակօրէն մատնանշում է Սան Ստեֆանոյի եւ Բեռլինի վեհաժողովների պայմանագրերի՝ արեւ-

մտահայութեանն առնչուող յօգուածների էական տարբերութիւնը: Մատնանշում որ բարենորոգումների երաշխաւորումը՝ ըստ երկրորդ փաստաթղթի Ռուսաստանի փոխարէն ստանձնում էին վեց մեծ տէրութիւնները⁴⁴: Դրանից ելնելով Արքա Գրիգէյը Հայոց Յեղասպանութիւնը միանգամայն իրաւամբ մեկնաբանում է իբրեւ սուլթանի որդեգրած՝ Հայկական Հարցին լուծում տալու տարբերակ⁴⁵, ինչը պարզորոշ վկայում է, որ նրան յաջողուել է բացայայտել արեւմտահայութեան բնաջնջման հիմնական պատճառը:

Մահմեդականներին բնորոշ մոլիբուանդութեան հենքի վրայ, Արքա Գրիգէյը փաստում է հայերի հանդէպ թուրքերի ունեցած աւանդական ատելութեան նշանակութիւնը հայկական կոտորածներում: Սա նպատակ է թէ՛ թուրքերի եւ թէ՛ յաճախ նրանց իսկ զոհը դարձած քրդերի համախմբմանը, քանզի այս պարագայում արդէն վերջիններս վերածուել էին իրենց իսկ դահիճների օժանդակ ուժի⁴⁶: Այս հարցում, սակայն, նրա մեկնաբանութիւններն սպառնչ չեն, քանզի կայսրութեան տարածքում բնակուող քրդերի որոշ մասի մասնակցութիւնը հայերի ոչնչացմանը պայմանաւորուած էր այլեւայլ դրդապատճառներով, նաեւ՝ Արդուլ Համիդի՝ վերջիններիս միջոցով հայկական կոտորածների իրականացման ցանկութեամբ⁴⁷:

Արեւմտահայութեան հանդէպ հարստահարիչների ատելութիւնն Արքա Գրիգէյը պատճառաբանում է նաեւ հայերի այնպիսի արժանիքներով, ինչպիսիք են աշխատասիրութիւնը, տարբեր ասպարէզներում բանիմացութիւնը, որոնք աննկատ չեն մնացել օսմանեան իշխանութեան եւ դրա գործակալների կողմից⁴⁸: Այս պայմաններում, հաշուի առնելով պատմական Հայաստանի բաժանման հանգամանքը եւ ելնելով հայ ժողովրդի շահերից, նա դրական է գնահատում Արեւմտեան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման հնարաւոր տարբերակը⁴⁹:

Բեռլինի վեհաժողովին յաջորդած ժամանակաշրջանում արեւմտահայութեան հալածանքները (չարաչահումների սաստկացում, արդարադատութեան կատարեալ բացակայութիւն, համիդիէ զօրամիաւորումների բռնութիւններ) Արքա Գրիգէյը քննարկում է՝ ըստ կոստանդնուպոլսում Ֆրանսիայի դեսպան Պոլ Կամբոնի գեկուցագրերի: Նա հայերի համար ստեղծուած իրավիճակը պատճառաբանում է գլխաւորապէս Եւրոպայի անտարբերութեամբ⁵⁰:

Արքա Գրիգէյը չի թաքցնում իր հիմնական նպատակը՝ Հայոց Յեղասպանութեան ապացուցումը՝ սոսկ պաշտօնական եւ անառարկելի վկայութիւններից քաղուած փաստերի վկայակոչմամբ⁵¹: Ըստ այդմ՝ ձեռնպահ մնալով Յեղասպանութեան առաջին փուլի պատմութեան հիմնահարցերի գիտական մեկնաբանութիւնից, նա սահմանափակուած է 1894-1896ի հայկական կոտորածների բազմաթիւ մանրամասների թուարկմամբ: Ուստի՝ յղելով Ֆրանսիական սկզբնաղբիւրներ, մասնա-

ւորապէս, Դեղին Գիրքը եւ Սվազում (Սերաստիա) Ֆրանսիայի փոխհիւպատոս Կարլիէի տիկնոջ օրագիրը⁵², իր առջեւ դրուած խնդիրը նա, ըստ էութեան, կատարել է: Ըստ այս սկզբնաղբիւրներից մէջբերուած ընդարձակ քաղուածքների՝ նա ուրուագծում է Արեւմտեան Հայաստանի տարրեր նահանգներում կատարուող կոտորածների հաւաստի պատկերը⁵³:

Այնուամենայնիւ, Աբբա Գրիգէլի շարադրանքում նկատուում են նաեւ սակաւաթիւ հեղինակային միջամտութիւններ, որոնք մասամբ վերաբերում են օսմանեան իշխանութիւնների յանցագործ քաղաքականութեան բացայայտմանը: Հեղինակը նշում է օսմանեան իշխանութիւնների կրաւորական ընթացքը, որով լուութիւն էին պահպանում, պատասխանատուներին թաքցնում կամ որոշ տեղական բարձրաստիճան պաշտօնեաներ պաշտօնի բարձրացում էին ունենում՝ իբրեւ հայկական կոտորածների ծաւալման համար գործադրած ջանքերի վարձատրութիւն⁵⁴:

Առաւել արժէքաւոր են, սակայն, Հայկական Հարցում մեծ տէրութիւնների որդեգրած քաղաքականութեանն առնչուող Աբբա Գրիգէլի մեկնաբանութիւնները: Իր գործընկերների նման, նա եւս խստիւ նշաւակում է Գերմանիայի հակահայ քաղաքականութիւնը, վիլհելմ Բ. կայսրին անուանում Կարմիր Սուլթանի «բարեկամ ու շողորոր» եւ խարազանում Ֆրանսիայի ախոյեանին այն «ամօթալի աջակցութեան» համար, որը նա ցուցաբերել է քրիստոնեայ ժողովրդի դահիճներին՝ նրա կատարեալ բնաջնջման ընթացքում⁵⁵: Միաժամանակ որոշ հայեցակարգային հարցերում նա շեղւում է ԺԹ. դ. վերջի եւ Ի. դ. սկզբի իր նախորդների տեսակէտներից եւ առաջադրում շատ աւելի ընդգրկուն մեկնաբանութիւններ:

Այս առումով, հարկ է առանձնացնել Ռուսաստանի քաղաքականութեան գնահատականը, քանզի այս հարցում Աբբա Գրիգէլը զուսպ, այդուհանդերձ, ի տարբերութիւն շատ ուրիշների, քննադատում է ցարին, որը երկար ժամանակ չի ցանկացել զբաղուելու Հայկական Հարցով⁵⁶: Քննարկուող ժամանակաշրջանում Ֆրանսիացի պատմաբանները ելնելով ռուս-ֆրանսիական դաշինքի ամրապնդման անհրաժեշտութիւնից՝ ձեռնպահ են մնացել Ֆրանսիայի դաշնակցի հասցէին քննադատական բնոյթի եզրայանգումներից⁵⁷: Հեղինակի անկողմնակալ եւ բացայայտող այս դիտարկումը կարելի է մեկնաբանել սոսկ այն բանով, որ նրա գիրքը թղթին է յանձնուել Առաջին Համաշխարհային Պատերազմի սանձազերծումից յետոյ, երբ դաշնակցին հաճոյանալու կարիքը Ֆրանսիան այլեւս չունէր⁵⁸:

Հեղինակը, սակայն, չըջանցում է ԺԹ. դարի վերջին եւ Ի. դարի սկզբին Ռուսաստանի արեւելեան քաղաքականութեանը համահունչ Ֆրանսիայի թրջամէտ արտաքին քաղաքականութեան վերլուծութիւնը

եւ խարազանումը: Ի դէպ, այդ քաղաքականութիւնը մեծապէս նպաստել է Հայոց Յեղասպանութեան առաջին փուլի իրականացմանը: Փոխարէնը, նա մեծ տեղ է յատկացնում Օսմանեան Կայսրութեան տարածքում հաւատարմագրուած Ֆրանսիացի դիւանագէտների՝ Կամբոնի, Դիարբեքիրում փոխհիւպատոս Մէյրիէի անձնուրաց գործունէութեան դրուատմանը, բնորոշելով նրանց վարքագիծն իբրեւ հերոսական եւ մատնանշելով, որ առանց նրանց միջամտութեան կոտորածներն աւելի սաստիկ կը լինէին⁵⁰: Այս պարագայում, մեր կարծիքով, նրան որեւէ չափազանցութեան մէջ մեղադրել ճիշդ չէ:

E. DOUMERGUE, L'ARMÉNIE. LES MASSACRES ET LA QUESTION D'ORIENT. CONFÉRENCE, ÉTUDES ET DOCUMENTS

Արքա Գրիգէլի նման Մոնտորոնում Բողոքական Աստուածաբանութեան Ֆակուլտէտի դեկան էմիլ Դոմեբրգին եւս յաջողուել է բացայայտել Հայկական Հարցին լուծում տալու անհրաժեշտութեանը յանգող Հայոց Յեղասպանութեան հիմնական պատճառը: Համիդեան կոտորածների պատմութիւնը նա հպանցիկ քննարկել է 1916 Յունուարի 16ին Փարիզում՝ Հայկական Հարցին եւ Հայոց Յեղասպանութեանը նուիրուած հրապարակային դասախօսութիւնում⁵⁰: Հայոց Յեղասպանութեան առաջին փուլի պատմութիւնը նա մեկնաբանում է ելնելով գլխաւորապէս Հայկական Հարցի ծագման ակունքներից:

Նախ հայ ժողովրդի պատմական զարգացման յետնախորքի վրայ մի քանի անկողմնակալ հպումներով նա ուրուագծում է Օսմանեան Կայսրութեան կազմաւորման ընթացքը: Թուրքերին բնորոշելով իբրեւ կենտրոնական Ասիայի անձայրածիր անապատներից եկած հորդանների, Դոմեբրգն իրաւամբ նրանց համեմատում է իրանի եւ Հայաստանի վրայով անցած փոթորկի հետ, որոնք գրաւելով Կոստանդնուպոլիսը, կազմաւորել են աւելի քան կայսրութիւն. «Նրանք ստեղծել են ասիական ռազմամոլութեան աշխարհը»⁵¹: Ինչպէս տեսնում ենք, նա ի սկզբանէ ընդգծում է Օսմանեան Կայսրութեան ռազմամոլ բնոյթը: Դրա վրայ է խարսխուում նրա հայեցակարգը:

Դոմեբրգը ըստ պատշաճի բացայայտում է թուրքերի առանձնաշատկութիւնը՝ իբրեւ Օսմանեան Կայսրութիւնում տիրապետող ժողովրդի: Ըստ այդմ, ի վիճակի չլինելով հանրագուտ աշխատանքի, նրանք գոյատեւում էին քրիստոնեայ հպատակներին շահագործելու միջոցով: Օսմանեան կառավարութիւնը բնորոշելով իբրեւ վատթարագոյնը բոլոր կառավարութիւնների թւում, նա իրաւամբ նշում է, որ բոլոր ոչ-թուրք ժողովուրդներին այն վերաբերուած էր իբրեւ «կթան կովեր»ի եւ միայն դրանով է բացատրում թուրքերի հանդուրժողականութիւնը քրիստոնեաների հանդէպ⁶²:

Օսմանահպատակ քրիստոնեաների թվում հեղինակն առանձնացնում է հայերին եւ նրանց հակադրում թուրքերին: Ըստ նրան, եթէ թուրքերը ռազմամոլ են, գիտութիւնների, արուեստների եւ առեւտրի հետ առնչութիւն չունեցող, ապա հայերն առեւտրի ասպարէզում ունեն բացառիկ ունակութիւններ եւ քանի որ խաղաղասէր են՝ յեղափոխական տրամադրուածութիւնները նրանց բնորոշ չեն⁶³: Հայոց Յեղասպանութեան ժխտողական ուղղութեան ներկայացուցիչների կողմից առայսօր շահարկուող այս էական հիմնախնդրի շուրջ Դումբերգը, ի տարբերութիւն Բարրի, սահմանափակուած է սոսկ այս ընդհանուր բնոյթի յիշատակմամբ: Դումբերգը հերքում է այն թիւր թեզերը թէ հայերի հանդէպ բռնութիւնների պատճառը արեւմտահայութեան կարծեցեալ յեղափոխական գործունէութիւնն է:

Հայկական Հարցի ծագման խնդիրը Դումբերգն ուսումնասիրում է պատմական Հայաստանի բաժանման հենքի վրայ, որին մեծ նշանակութիւն է յատկացնում: Ընդգծելով, սակայն, Արեւմտեան Հայաստանի բաժանումը վեց վիլայէթի, նա յստակօրէն չի մատնանշում այն պատմական հանգամանքները, որոնց հետեւանքով 1555ին Ամասիայի եւ 1639ին Կասրէ-Շիրինի պայմանագրերով տեղի է ունեցել Հայաստանի մասնատումը թուրքիայի եւ Պարսկաստանի միջեւ, ինչն արդէն նրա բացթողումներից է⁶⁴:

1870ականներից սկիզբ առած եւ մինչեւ իր օրերը յարատեւած միջազգային ճգնաժամի գլխաւոր պատճառները, որոնք յանգեցրել են Առաջին Համաշխարհային Պատերազմին, Դումբերգը պայմանաւորում է 1878ի Բեռլինի վեհաժողովի ընդունած որոշումներով: Բեռլինի պայմանագրում՝ ըստ նրա պատկերաւոր համեմատութեան, «հազիւ տեսանելի տառերով դեւ ուրուագծել էր 1876-1916ի իրադարձութիւնների ամբողջ ծրագիրը»⁶⁵: ԺԹ. դարի վերջին տասնամեակներում միջազգային յարաբերութիւնների ընթացքը քննարկել՝ նման խիստ նեղ տեսանկիւնից, մենք անընդունելի ենք համարում: Մանաւանդ որ (պայմանագիրը չէր ուրուագծում հակամարտ դաշինքների ձեւաւորումը Եւրոպայում), նա համեմատական քննութեան է ենթարկում Սան Ստեֆանոյի՝ «արդարութեան եւ ազատագրման», ինչպէս նաեւ միաժամանակ՝ «Ռուսաստանի համար խիստ շահաւետ» եւ Բեռլինի «անարդար ու նողկալի» պայմանագրերը: Դումբերգը թէեւ, ըստ էութեան, չի մեկնաբանում այդ պայմանագրերում ամփոփուած՝ հայ ժողովրդի ճակատագրին առնչուող յօդուածների տարբերութիւնը, այդուհանդերձ, առնուազն բաւարարւում է այդ էական հանգամանքին առնչուող հպանցիկ ակնարկով, մատնանշելով, որ վերջինն անվաւեր էր դարձնում Ռուսաստանի ստանձնած բոլոր պարտաւորութիւնները⁶⁶: Ըստ այդմ, այս պարագայում, միանգամայն իրաւամբ նա եզրակացնում է. «Թուրքիան փրկուած էր»⁶⁷:

Միջազգային ասպարէզում իրադարձութիւնների ծաւալման նկատմամբ Դումերգի հայեցակարգի հիմնական առանցքը մեծ տէրութիւնների՝ բարենորոգումների իրականացման հարցում օսմանեան կառավարութեան հանդէպ վերահսկողութեան սահմանման հիմնախնդիրն է: Նա իրաւամբ մեծ նշանակութիւն է տալիս Բեռլինի պայմանագրով եւրոպական պետութիւնների ստանձնած պարտաւորութիւններին՝ սուլթանի ներքին գործերին վերահսկողութեան սահմանմամբ: Այս վերահսկողութիւնը կանխորոշել է տէրութիւնների եւ Օսմանեան կայսրութեան փոխարարութիւնների զարգացման ընթացքը, եւ ըստ նրա մեկնաբանութեան՝ վերածուել վերջինիս համար ստորացուցիչ իրողութեան: Ակնյայտօրէն չափազանցելով հոգեբանական այս գործօնի նշանակութիւնը եւ անհարկի խտացնելով գոյները, Դումերգը տէրութիւնների վերահսկողութեան սահմանումն անիրաւացիօրէն ներկայացնում է իբրեւ սադրանք, ինչը համահունչ է նրա հայեցակարգին: Իրականում, սակայն, մեծ տէրութիւնների՝ Օսմանեան կայսրութեան ներքին գործերին միջամտելու եւ վերահսկողութիւն սահմանելու հեռանկարը, անտարակոյս, շիկացրել է մթնոլորտն օսմանեան պետութեան ղեկավար շրջանակներում, բորբոքել սուլթանի եւ նրա համախոհների կրքերը, մեծապէս նպաստել երկրում ազգայնամոլութեան վերելքին: Այդուհանդերձ, մեր համոզմամբ, դրանից նման ծայրայեղ, չափազանցուած հետեւութեան յանգելը ճիշտ չէ: Առաւել եւս Դումերգի իսկ ուրուագծած՝ կայսրութիւնում տիրող իրավիճակի յետախորքի վրայ, վերահսկողութեան սահմանումը կարելի է գնահատել սոսկ իբրեւ 1880-90ականներին իրավիճակի գերլարման առիթ, բայց ոչ սադրանք:

Ինչպէս ցոյց տուեց իրադարձութիւնների յետագայ ընթացքը, արեւմտահայութեան հանդէպ տէրութիւնների ստանձնած պարտաւորութիւնները, յիրաւի, կրում էին ձեւական բնոյթ: Միայն այս առումով արդէն կարելի է համաձայնուել Դումերգի հիմնական հետեւութիւններից մէկի հետ, թէ՛ Բեռլինի պայմանագիրը լինելով աւելին, քան սխալ՝ «յանցանք էր»⁸⁸: Մասնաւորապէս արեւմտահայութեան համար այն, իրօք, ունեցել է ճակատագրական նշանակութիւն, ինչը փաստել է նաեւ հեղինակը. «Հայաստանի եւ աշխարհի վիճակը նստում էր»⁸⁹:

Դումերգը, սակայն, ոչնչով չի հիմնաւորում մեծ տէրութիւնների՝ Հայկական Հարցում որդեգրած քաղաքականութեան պատճառները: Նա, ըստ էութեան, խուսափում է մեկնաբանել արեւմտահայութեան ճակատագիրը կանխորոշած, մասնաւորապէս Օսմանեան կայսրութեան տարածքային ամբողջականութեան պահպանութեան հաւատարիմ մնալու նրանց անսասան դիրքորոշումը:

Դումերգի առաջադրած՝ Հայկական Հարցի մեկնաբանութեան կապակցութեամբ նախ, հարկ է նշել, որ նա չի մանրամասնում դրա ծագ-

ման հանգամանքները: Փոխարէնը, ելնելով իր հայեցակարգից, նա ծաւալոււմ է Արդուլ Համիդի՝ եւրոպական տէրութիւնների վերահսկողութիւնից եւ յետագայ ստորացումներից ու սպառնալիքներից ձերբազատուելու մտադրութեան շուրջ: Միայն այս առնչութեամբ արդէն առաջին անգամ նա յիշատակոււմ է «Հայկական Հարց»ի գոյութիւնը, որի լուծման «ամենայնուայնի միջոցը», ինչպէս նա մեկնաբանոււմ է՝ ըստ սուլթանի մտայնութեան, յանգում էր հայերի ոչնչացմանը⁷⁰: Թէեւ նրան հասու է, ինչպէս տեսնոււմ ենք, Հայոց Յեղասպանութեան գլխաւոր պատճառը, այդուհանդերձ, ըստ էութեան, նա այն հիմնաւորապէս չի մեկնաբանոււմ: Հետեւաբար, ժամանակաշրջանի պատմութեանն անիրագրել պատմաբանի համար մնում է անհասկանալի, թէ ի՞նչ հանգամանքներու է ծագել Հայկական Հարցը եւ առաւել եւս ի՞նչ է այն: Քանզի այս խնդիրների շուրջ արդէն նա գերադասոււմ է ձեռնպահ մնալ մեկնաբանութիւններից:

Հայոց Յեղասպանութեան առաջին փուլի սանձագերծման մասին, հեղինակը սոսկ հպանցիկ յիշատակոււմ է Արդուլ Համիդի նախապատրաստական միջոցառումները: Նա անդրադառնում է մասնաւորապէս 1890ի համիդիէ զօրամիաւորումների կազմաւորման, որոնց անդամներին անուանում է «յաժան կողոպտիչներ», մանրամասնում, որ սուլթանը նրանց շնորհել էր արտօնութիւններ, իսկ նրանց զոհերին զրկել նոյնիսկ «բողոքելու իրաւունքից»⁷¹:

1894ին սուլթանի կարգադրութեամբ տեղի ունեցած Սասունի կոտորածի մասին եւս հեղինակը յիշատակոււմ է թուուցիկ⁷²: Դրան յաջորդած եւրոպական պետութիւնների միջամտութեանն առնչուող նրա դիտարկումները խիստ մակերեսային են: Այս կապակցութեամբ, սակայն, մենք համաձայն ենք նրա հիմնական մեկնաբանութիւններից մէկի՝ հետ, թէ՛ այդ միջամտութիւնն ընդամէնն արագացրել է սուլթանի ծրագրի իրականացումը եւ նպաստել 1895ի հայկական վեց վիլայէթներում կոտորածների ծաւալմանը⁷³:

Ինչպէս տեսնոււմ ենք, Հայոց Յեղասպանութեան պատմութեան խնդիրների թւում Դումերզն ուշադրութիւնը կենտրոնացնում է գլխաւորապէս մեծ տէրութիւնների միջամտութեան հանգամանքի վրայ: Կոտորածների առնչութեամբ նա սահմանափակոււմ է սոսկ մի քանի, սակայն, խիստ կարեւոր մանրամասների թուարկմամբ: Նա պարբերաբար, այդ թւում, ըստ Լեփսիուսի տուեալների, փաստում է սուլթանի ղեկավար դերը եւ դրանով իսկ առնուազն ակնարկում թէ Հայոց Յեղասպանութիւնն իրականացել է պետական մակարդակով⁷⁴: Հարկ է մատնանշել, որ Դումերզը չի նպատակադրել իրադարձութիւնների մանրամասներին թափանցել: Նա հաւաստի տուեալներ չի ունեցել անգամ 1894-1896ի արեւմտահայութեան զոհերի քանակի շուրջ, այն պարփակելով 200.000ի սահմանում⁷⁵: Իսկ կոտորածների առնչութեամբ

եւրոպական տէրութիւնները՝ ըստ էութեան դիտողի դերում հանդէս գալու մասին, հեղինակը բաւարարւում է քննադատական մի քանի անշան դիտարկումներով⁷⁶ :

Չնայած ընդհանուր բնոյթի դիտարկումներին եւ յաճախ ոչ-սպառնիչ մեկնաբանութիւններին, Դումերգին, այդուհանդերձ, յաջողուել է ցուցաբերել վերլուծական մօտեցում, բացայայտել Աբդուլ Համիդի՝ Հայկական Հարցում որդեգրած քաղաքականութեան դիմագիծը եւ յանգել թէպէտ ոչ-ընդգրկուն, այդուհանդերձ, ընդհանուր առմամբ, անկողմնակալ եւ իրատես հետեւութիւններին:

JOSEPH DENAIS, « LA TURQUIE NOUVELLE ET L'ANCIEN RÉGIME »

Դումերգի դասախօսութեան նախորդել է գիտական նշանակութեան առումով նուազ կարեւոր՝ գրող եւ լրագրող Ժոզէֆ Դենէի (1851-1916)՝ 1908ի երիտթուրքական յեղափոխութեանը յաջորդած ժամանակաշրջանում թուրքիայում տեղի ունեցող խմորումներին նուիրուած, 1908 Մարտի 8ին Փարիզում կայացած, «Նոր Թուրքիան Եւ Հին Վարչակարգը» հրատարակային դասախօսութիւնը, որի ընթացքում նա մակերեսայնօրէն քննարկել է նաեւ 1894-1896ի կոտորածների պատմութեանն առնչուող որոշ խնդիրներ⁷⁷ :

Հեղինակն, աւելի քան Դումերգը խուսափում է իրադարձութեան մանրամասներին թափանցելուց: Դենէի մօտեցման հիմնական արժանիքը Հայոց Յեղասպանութեան առաջին փուլի իրականացման փաստումն է պետական քաղաքականութեան մակարդակով: Նա մէջբերում է առ այդ արեւմտահայութեան բնաջնջման գործընթացում օսմանեան կենտրոնական իշխանութիւնների, մասնաւորապէս Երլըզլի Պալատի՝ ղեկավար դերը բացայայտող տարրեր հաւաստի փաստեր⁷⁸ :

Հայոց Յեղասպանութեան սանձազերծման պատասխանատուութիւնը Դենէն բարդում է Օսմանեան Պետութեան ղեկավարների վրայ, որոնք յղացել են արեւմտահայութեան ոչնչացման ծրագիրը: Միաժամանակ, սակայն, նա չըջանցում է թուրքերի եւ քրդերի մասնակցութիւնն այդ իրադարձութեան վրայ եւ նսեմացնում Յեղասպանութեան գործընթացի վրայ իր էական դրոշմը թողած՝ նրանց խիստ բնորոշ կրօնական մոլեռանդութեան նշանակութիւնը, ինչն արդէն բացայայտ շեղում է պատմական իրականութիւնից: Մատնանշելով կայսրութեան տարրեր վայրերում արձանագրուած մահմեդականների՝ հայերին ցուցաբերած օժանդակութեանն առնչուող փաստեր, որոնք անառարկելիօրէն վկայում են գթասիրտ մահմեդականների՝ իրենց դաւանանքը չընդունող անձանց հանդէպ ցուցաբերած օգնութեան մասին⁸⁰, նա, ըստ այդմ, մահմեդականների մոլեռանդութիւնը, յանիրաւի, բնորոշում է ընդամէնն իբրեւ «կարծեցեալ»⁸¹: Հարկ է նշել, որ այս պարագայում

Դեննին անտեսում է մահմեդականների կրօնական մոլեռանդութեանն առնչուող՝ Փրանսիական բազմաթիւ փաստաթղթերի ժողովածուներում, այդ թւում *Դեղին Գիրքում*, հրապարակուած անհամար արժանահաւատ փաստերը⁸², որոնց նա, հաւանաբար, չէր կարող անտեղեակ լինել: 1890ականների պատմութիւնը Դեննին մեկնաբանում է գլխաւորապէս ամբողջական իրականութեանն արդէն ամենեւին չհամապատասխանող այս հենքի վրայ:

Պետական քաղաքականութեան մակարդակով Հայոց Յեղասպանութեան իրականացման փաստը հաւաստող Դեննի ցուցաբերած նման անընդունելի մօտեցման առնչութեամբ հարկ է հաշուի առնել այն պատմական ժամանակաշրջանը, երբ նա հանդէս է եկել այս զեկուցմամբ: Երիտթուրքական յեղափոխութեամբ՝ 1876ի օսմանեան սահմանադրութեան վերահաստատումից յետոյ, նա եւ իր ժամանակակիցները, անտարակոյս, մեծ յոյսեր են կապել, մասնաւորապէս կայսրութեան քրիստոնեայ հպատակներին ազատութիւններ շնորհելու՝ երիտթուրքերի շուայած սին խոստումների հետ: 1908ի յեղափոխութիւնից յետոյ մասնաւորապէս թուրք մահմեդականների՝ քրիստոնեաների հետ խաղաղ գոյակցելու անիրատես հեռանկարը նրան կարող էր միայն ապակողմնորոշել: Մեր կարծիքով այդ հեռանկարը դարձել է Յեղասպանութեան իրականացման վրայ կրօնական մոլեռանդութեան թողած դրոշմի ոչ-սպառիչ գնահատման հաւանական պատճառներից: Բացի դրանից, հնարաւոր է եւս մէկ պատճառ, որը եւս սերտօրէն առնչում է 1908ի յեղափոխութեան հռչակած՝ կայսրութեան ժողովուրդների թէական իրաւահաւասարութեանը: Չի բացառուում, որ հաշուի առնելով ստեղծուած նոր իրավիճակի առանձնայատկութիւնները, նման կողմնակալ մօտեցում Դեննին ցուցաբերել է գիտակցաբար՝ հայերի եւ երիտթուրքերի միջեւ հաշտութեան եզրերի հաստատմանը նպաստելու մտադրութեամբ:

E. LEMONON, *L'EUROPE ET LA POLITIQUE BRITANNIQUE* (1882-1911)⁸³

Ինչպէս եւ 1890ականներին, այս ժամանակաշրջանում եւս Հայկական Հարցի եւ Հայոց Յեղասպանութեան առաջին փուլի պատմութեանն առնչուող խնդիրներին անդրադարձել են նաեւ որոշ Փրանսիացի իրաւաբաններ: Նրանք արեւմտահայութեան ճակատագրին առնչուող հիմնահարցերը վերլուծել են միջազգային յարաբերութիւնների հենքի վրայ:

Մասնաւորապէս, Էռնեստ Լեմոնոնը՝ 1882-1911ի Բրիտանիայի արտաքին քաղաքականութեանը նուիրուած գրքում համառօտակի քննարկել է նաեւ Հայկական Հարցի պատմութիւնը՝ Անգլիայի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի հակամարտութեան յետնախորքում⁸⁴:

Առանց խորամուխ լինելու հայկական կոտորածների պատմութեան մանրամասներում, Լեմոնոնն ուշադրութիւնը բեւեռում է գլխաւորապէս 1890ականներին Հայկական Հարցում մեծ տէրութիւնների շահերի բախման ուսումնասիրութեան վրայ, եւ ցուցաբերում ակնյայտ միտումնաւոր մօտեցում: Նրա հիմնական նպատակը Ֆրանսիայի արեւելեան քաղաքականութեան հիմնաւորումն է եւ ջատագովումը, մասնաւորապէս՝ Օսմանեան Կայսրութեան տարածքային ամբողջականութեան պահպանութեան հարցում:

Տուրք տալով ծայրայեղութիւնների, հեղինակը մեծապէս չափազանցում է Բրիտանիայի արտաքին քաղաքականութեան չարագուշակ հետեւանքները Մերձաւոր Արեւելքում, ինչը միանգամայն համահունչ է պատմական այս ժամանակաշրջանում Ֆրանսիական պատմագրութեան ընդհանուր ոգուն: Հայկական Հարցում այդ երկրի քաղաքականութեան մեկնաբանութեան ասպարէզում Լեմոնոնի ընդգծուած միակողմանի դիրքորոշումը դրսեւորւում է երկու հիմնական կտրուածքներով: Անթաքոյց շեղուելով պատմական իրականութիւնից, նա նախ մեծապէս գունազարդում է «Մշուշապատ Ալբիոն»ի շահագրգռուածութիւնն արեւմտահայութեան համար նախատեսուող բարենորոգումների իրականացման հարցում: 1878 Յունիսի 4ի պայմանագրի կապակցութեամբ հեղինակը պնդում է, որ Հայաստանում նախատեսուող բարենորոգումների հարցը Բրիտանիան իբր վերածել էր «անգլիական գործ»ի. շահագրգռուած էր դրանց իրականացման հարցով եւ դրանցով միայն իբր ինքն էր զբաղւում, քանզի միջազգային պայմանագրերը նրան ընձեռել էին բացառիկ հնարաւորութիւն Հայաստանը հիմնաւորապէս իր ազդեցութեան ոլորտ ընդգրկելու համար⁸⁵: Այս խիստ չափազանցուած հետեւութեամբ հեղինակը ցանկանում է առարկայական դարձնել Բրիտանիայի կարծեցեալ նպատակը՝ Օսմանեան Կայսրութեան տարածքում իրավիճակի գերլարումը, որով ակնյայտ կը դառնար Արդուլ Համիդ Բ-ի թուլութիւնը եւ հնարաւորութիւն կ'ընձեռէր բրիտանական կառավարութեանը սուլթանի ներքին գործերին զինուած ճանապարհով միջամտելու նպատակայարմարութեան, ինչն «Անգլիային քում էր անհրաժեշտ»⁸⁶:

Լեմոնոնը խնդիր է դրել Բրիտանական կառավարութիւնն իրրեւ Օսմանեան Կայսրութեան տրոհման կողմնակից անարդարացիորէն ներկայացնել, ինչը պայմանաւորուած է Բրիտանիայի կողմից Եգիպտոսի բռնազրաւմամբ: Իրականում, տուեալ ժամանակաշրջանում, Բրիտանիայի քաղաքականութիւնը ըստ էութեան, միտուած էր գլխաւորապէս Կայսրութեան տարածքային ամբողջականութեան պահպանութեանը⁸⁷:

Իր համոզմամբ, Ֆրանսիայի ռազմավարութեանն անյարիր՝ Բրիտանիայի քաղաքականութեանը նա հակադրում է Գ. Հանրապետու-

Թեան եւ Ռուսաստանի ղեկավար շրջանակների խոհեմ քաղաքականութիւնը, որոնք հետամուտ լինելով Օսմանեան Կայսրութեան տարածքային ամբողջականութեան պահպանման, սուլթանին խորհուրդ էին տալիս վարել «զգոյշ եւ չափաւոր» քաղաքականութիւն, իրականացնել բարենորոգումներ եւ լիցքաթափել իրավիճակը: Լեմոնոնը դրուատում է Բրիտանիայի գինուած միջամտութիւնը խափանելու խնդրում՝ 1894-95 եւ 1896-98ին Ֆրանսիայի Արտաքին գործերի նախարար Գաբրիէլ Հանոտոյի ջանքերը: Վերջինս, Օսմանեան Կայսրութեան ներքին գործերին չմիջամտելու սկզբունքին հաւատարիմ⁸⁸ պարտադրել է նրան դիմել հայերի օգտին գիշումների, ինչպիսին է օրինակ համաներումը⁸⁹:

Միջազգային յարաբերութիւնների պատմութեանն առնչուող հիմնախնդիրները Լեմոնոնը քննարկում է խիստ միտումնաւոր դիրքերից, ինչը չի նպաստում իրադարձութիւնների շուրջ հաւաստի պատկերացումների ձեւաւորմանը: Դա պայմանաւորուած է գլխաւորապէս Ֆրանսիայի արտաքին քաղաքականութեանը արդարացիութիւն տալու անհրաժեշտութեամբ: Միաժամանակ, նրա շարադրանքում զգալի են ԺԹ. դարի վերջի եւ Ի. դարի սկզբի Ֆրանսիական պատմագրութեանը բնորոշ հակասագլխական միտումները:

F. SURBEZY, LES AFFAIRES D'ARMÉNIE ET L'INTERVENTION DES PUISSANCES EUROPÉENNES (DE 1894 À 1897)

Հայկական Հարցի եւ Հայոց Յեղասպանութեան առաջին փուլի պատմութեան որոշ հիմնախնդիրներ վերլուծել է նաեւ մէկ այլ իրաւաբան՝ Ֆրանսուա Սուրբեզին: Նա 1911ին Մոնպելիէի Համալսարանում պաշտպանել է «Հայաստանի Գործերը Եւ Եւրոպական Տէրութիւնների Միջամտութիւնը (1894-1897 թթ.)» դոկտորական ատենախօսութիւնը⁹⁰: Հիմնուելով գլխաւորապէս Դեղին Գիրքում ամփոփուած վաւերագրերի վրայ, հեղինակն անկողմնակալ դիրքերից քննարկում է Հայկական Հարցին եւ Հայոց Յեղասպանութեան առաջին փուլին առնչուող մի շարք էական հիմնախնդիրներ: Իբրեւ իրաւաբան, նա շեշտը դրել է Հայկական Հարցի հանդէպ եւրոպական տէրութիւնների որդեգրած քաղաքականութեան մեկնաբանութեան վրայ՝ իր ժամանակի միջազգային իրաւունքի չափանիշների կտրուածքով:

Սուրբեզին նախ համառօտակի անդրադառնում է Հայ ժողովրդի պատմական անցիւղին, Հայաստանի ռազմակալմանը՝ թուրքերի կողմից, որի հետեւանքով հայերը հեծել են օսմանեան լծի տակ: Թուարկելով օսմանահպատակ հայերի հարստահարմանը վերաբերող փաստեր, նա ոչ միայն նրանց կացութիւնն է բնորոշում իբրեւ ողբալի, այլեւ պարզորոշ ընդգծում է նման իրավիճակի առկայութիւնն «իրենց (հայերի - Վ.Պ.) սեփական երկրում» (ընդգծումը մերն է - Վ.Պ.), դրանով իսկ ակնարկելով պատմական Հայաստանի ռազմակալման փաստին:

Սուրբեզին, սակայն, հանդէս չի գալիս սոսկ իրրեւ իրադարձութիւնների ականատես. նա հաշուի է առնում արեւմտահայութեան եւ արեւելահայութեան պատմական զարգացման առանձնապատկութիւնները: Յետադարձ հայեացքով, նա 1878ի հայկական որոշ տարածքների՝ Օսմանեան Կայսրութեան կողմից Ռուսաստանին զիջելու առնչութեամբ, հայ ժողովրդի անվտանգութեան շահերին նպատակաշարժար է գտնում Հայաստանի՝ Ռուսաստանի կազմում ընդգրկուելը:

1880ականներին հայկական զարթոնքի կապակցութեամբ եւս Սուրբեզին ցուցաբերում է նոյնքան անկողմնակալ մօտեցում: Նա հաւաստում է, որ հայերը ցանկանում էին սոսկ իրականութեան վերածել Բեռլինի վեհաժողովի պայմանագրով Բարձր Դռան ստանձնած պարտականութիւնների հիմամբ իրենց իրավիճակի բարելաւումը: Ի տարբերութիւն Հայոց Յեղասպանութեան պատմութեան՝ ժամանակի Փրանսիացի կեղծարարների (Ռ. Դէ Կուրսոն, Պ. Արդոն Բուասսոն եւ այլք) նա հնչակեաններին չի մեղադրում Օսմանեան Կայսրութիւնում ազգամիջեան խռովութիւններ հրահրելու մէջ⁹¹: Նրանց գործունէութիւնը Սուրբեզին մեկնաբանում է իրրեւ հայ ժողովրդի մօտ ազգային ինքնագիտակցութեան եւ ազատութեան գաղափարներ ներարկելու, ինչպէս նաեւ եւրոպական տէրութիւնների միջամտութիւնը հայցելու ձեւ:

1894ի Հայոց Յեղասպանութեան առաջին փուլի սանձագերծման առնչութեամբ Սուրբեզին առաջադրում է ընդունելի մեկնաբանութիւններ: Բազում փաստերի վկայակոչմամբ, նա հաստատում է, որ արեւմտահայութեան բնաջնջումը տեղի է ունեցել պետական քաղաքականութեան մակարդակով: Անդրադառնալով Մասունի կոտորածներին, նա մատնանշում է զօրքերի՝ օսմանեան կառավարութեան գաղտնի համաձայնութեամբ գործելու հանգամանքը: Միւս կողմից, հետաքննութիւնը վարած միջազգային յանձնաժողովի զեկուցագրի առնչութեամբ ընդգծում է, որ դա չափազանցութիւններ չի պարունակում⁹²: Արեւմտեան Հայաստանի այլ տարածաշրջաններում (էրզրում, Երզնկա, Բաբերդ, Բիթլիս, Սվազ, Մալաթիա եւ այլուր) տեղի ունեցած հայկական կոտորածները եւս նա պայմանաւորում է օսմանեան վարչակարգի «յանցաւոր անտարբերութեամբ»⁹³: Սուրբեզին խարազանում է յատկապէս օսմանեան տեղական պաշտօնեաներին՝ վիլայէթների վալիներին եւ նրանց ենթականերին, որոնք հայերի ոչնչացման ընթացքում յաճախ նոյնիսկ քաջալերել են թուրք եւ քուրդ բնակչութեանը: Ի վերջոյ, նա հաւաստում է, որ օսմանեան իշխանութիւններն ուրախ էին տեղի ունեցածով, քանզի յոյս էին տածում այդպիսով ձերբազատուել հայերից եւ նրանց գանգատներից: Սուրբեզին հաւաստում է նաեւ Բարձր Դռան յանցակցութիւնը 1896ի Օսմանեան Բանկի գրաւմանը յաջորդած՝ Կոստանդնուպոլսում կազմակերպուած հայկական կոտորածներին,

մասնաւորապէս ընդգծելով, որ ջարդարարներին «զինել էր օսմանեան կառավարութիւնը»⁹⁴ :

Իբրեւ իրաւարան, Սուրբեզին առանձնայատուկ ուշադրութեամբ վերլուծում է Հայկական Հարցի հանդէպ մեծ տէրութիւնների որդեգրած քաղաքականութիւնը: Սա նրա մօտեցման անկիւնաքարն է: Նա միջազգային իրաւունքի սկզբունքներով մանրամասնօրէն վերլուծում է մեծ տէրութիւնների՝ այս կամ այն պետութեան ներքին գործերին միջամտելու եւ չմիջամտելու իրաւասութիւնները: Սուրբեզին ելնելով միջպետական փոխյարաբերութիւններից, հաւաստում է, որ տէրութիւնները որդեգրել էին այլ պետութիւնների գործերին չմիջամտելու սկզբունքը: Փոխարէնը, նա առանձնացնում է Օսմանեան կայսրութեան պարագան, յատկապէս՝ տէրութիւնների, ի նպաստ հայերի սուլթանի ներքին գործերին միջամտելը: Այս բացառութիւնը նա բնորոշում է իբրեւ չմիջամտելու սկզբունքին անյարիր «ամենահրաշալի»⁹⁵ օրինակը, քանզի մեծ տէրութիւնները պարբերաբար միջամտել են կայսրութեան գործերին թէ՛ սուլթանի համաձայնութեամբ եւ թէ՛ նրա կամքին հակառակ: Ընդհանուր առմամբ, 1878ի Հայկական Հարցի ծագումից ի վեր, Հայաստանի գործերին Եւրոպայի միջամտութեան իրաւունքը նա իրաւամբ համարում է «անառարկելի»⁹⁶, եւ այն հիմնաւորում է նախ եւ առաջ Սան Ստեֆանոյի եւ Բեռլինի վեհաժողովների պայմանագրերով Բարձր Դռան կողմից այդ իրաւունքի ճանաչմամբ:

Հայկական Հարցի քննարկումը տեղափոխելով միջազգային իրաւունքի հարթութիւն եւ փաստելով Եւրոպայի իրաւասութիւնը՝ Օսմանեան կայսրութեան ներքին գործերին միջամտելու, Սուրբեզին, այդուհանդերձ, քննադատում է եւրոպական պետութիւններին, քանի որ ըստ էութեան նրանք ցանկութիւն չէին դրսեւորում պարտադրելու օսմանեան կառավարութեանը՝ կենսագործելու Բեռլինի վեհաժողովի պայմանագրով ստանձնած պարտականութիւնները: Միանգամայն իրաւամբ, նա ընդգծում է դրա հետեւանքով քրիստոնեայ հպատակների կացութեան վատթարացումը 1880ականներին, ինչն առիթ է տուել նրանց բողոքներին, որոնք եւ, վերջին հաշուով, 1894ի Սեպտեմբերին յանգեցրել են Սասունի կոտորածին: Ակնյայտ է, որ հեղինակը Հայոց Յեղասպանութեան սանձազերծման պատասխանատուութիւնն Օսմանեան կայսրութեան ղեկավարներից զատ անուղղակիօրէն բարդում է նաեւ մեծ տէրութիւնների՝ Հայկական Հարցում իրականացրած անարդիւնաւէտ քաղաքականութեան վրայ:

Այդուհանդերձ, Սուրբեզին շատ աւելի մեծ տեղ է յատկացնում արեւմտահայութեան համար բարենորոգումների կենսագործման հարցում Բարձր Դռան դրսեւորած չկամութեան բացայայտմանը եւ նշաւակմանը: Նա մանրամասնօրէն մեկնաբանում է կոստանդնուպոլսում հաւատարմագրուած օտարերկրեայ ղեսպանների մշակած՝ պատմու-

Թեան մէջ «մայիսեան» անուամբ յայտնի բարենորոգումների ծրագիրը⁹⁷, որը բնորոշում է թէ՛ իբրև «քառական չափատր» եւ թէ՛ Հայերի ցանկութիւնները մեծապէս բաւարարող ու թուրքերից մեծ գիջումներ չպահանջող:

Մաւալուելով այս կարեւոր հարցի շուրջ, Սուրբեղին մանրամասնօրէն քննարկում է նաեւ Բարձր Դռան՝ 1895 Յունիսին եւ Օգոստոսին դեսպաններին յղած պատասխանները⁹⁸: Դրանք պարզորոշ վկայում են արեւմտահայութեան անվտանգութեան հարցում որեւէ բարենորոգումի իրականացումից խուսափելու Բարձր Դռան հաստատակամութեան մասին. «Այս ոգով ոչինչ չի արուել»⁹⁹ եզրակացնում է նա:

Հայերի երբեմն ծայրայեղ արարքները (Օսմանեան Բանկի գրաւում եւն.) Սուրբեղին պատճառաբանում է նրանց նկատմամբ «օսմանեան կառավարութեան անտարբերութեամբ եւ չկամութեամբ»: Մասնաւորապէս, 1895 Սեպտեմբերին Կոստանդնուպոլսում Հայերի կազմակերպած բողոքի ցոյցը նա շողկապում է բարենորոգումների իրականացման հարցում Բարձր Դռան որդեգրած կոշտ դիրքորոշմանը, ինչն իր հերթին առիթ է դարձել լայնածաւալ կոտորածների սանձազերծման: Դրանով իսկ հեղինակը մէկ անգամ եւս հուժկու հակահարուած է տալիս Հայոց Յեղասպանութեան պատմութեան տարբեր կեղծարարների, որոնք Հայերի ցոյցը պայմանաւորում են հնչակեանների կարծեցեալ խառնակիչ գործունէութեամբ:

Սուրբեղին խստագոյնս նշաւակում է օսմանեան վարչակարգի երկդիմի քաղաքականութիւնը, մասնաւորապէս 1895 Հոկտեմբերին Բարձր Դռան մշակած բարենորոգումների թէական ծրագրի հիման վրայ¹⁰⁰: Այս առիթով նա մատնանշում է, որ դրա ընդունումից ի վեր Հայերի կացութիւնը որեւէ փոփոխութիւն չի կրել, քանզի նրանց կոտորել են ոչ միայն այդ ձեւական փաստաթղթի ընդունումից առաջ՝ 1895 Սեպտեմբերին Կոստանդնուպոլսում, այլեւ դրանից յետոյ՝ Արեւմտեան Հայաստանի գրեթէ բոլոր նահանգներում:

Դիւանագիտական յարաբերութիւնների պատմութեան ելեւէջներում ճիշտ կողմնորոշումներ ունեցող հեղինակը հանգամանալից անդրադառնում է նաեւ եւրոպական մեծ տէրութիւնների՝ Հայկական Հարցում վարած քաղաքականութեան առանձնայատկութիւններին (խօսքը վերաբերում է մասնաւորապէս Օսմանեան Կայսրութեան ներքին գործերին միայն խաղաղ ձեւերով միջամտութեանը նախապատուութիւն տալուն), վերհանում դրանց միջեւ առկայ տարակարծութիւնները: Ձինուած միջամտութեան հարցում տէրութիւնների դրսեւորած անբարեացակամ վերաբերմունքը նա իրաւամբ պատճառաբանում է Օսմանեան Կայսրութեան տարածքային ամբողջականութեան պահպանութեան սկզբունքի խախտման՝ նրանց համար անցանկալի հեռանկարից խուսափելու հանգամանքով, ընդգծում դրան միտուած ու-

սական ինքնակալութեան եւ Ֆրանսիայի Գ. Հանրապետութեան որդեգրած համահունչ քաղաքականութիւնն Արեւելեան Հարցում:

Ընդհանուր առմամբ, Սուրբեզին յանգում է միակ հնարաւոր հետեւութեան, թէ՛ տէրութիւնների չհամաձայնեցուած գործողութիւնները Բարձր Դռանը հնարաւորութիւն են ընձեռել օսմանահպատակ հայերի հետ վարուել ըստ իր հայեցողութեան:

Ընդհանուր գծերով, չնայած Սուրբեզիի առաջադրած ընդունելի մեկնաբանութիւններին, հարկ է նշել, որ նրա մօտեցումը որոշ առանցքային հարցերում գերծ չէ խոցելի «գարշապարներից»: Ժամանակի Ֆրանսիացի պատմաբաններից շատերի նման, Սուրբեզին եւս, վերը նշուած պատճառով, առիթը բաց չի թողնում չափազանցելու Բրիտանիայի քաղաքականութեան դերը Մերձաւոր Արեւելքում իրավիճակի շիկացման հարցում: Նա, անհարկիօրէն Բրիտանիային է վերագրում 1895-96ի Օսմանեան Կայսրութիւնում սկիզբ առած խառնաշփոթի պատասխանատուութիւնը, նոյնքան չափազանցուած դիրքերից մեկնաբանում Օսմանեան Կայսրութեան ներքին գործերին զինուած միջամտութիւն ցուցաբերելու հարցում բրիտանական կառավարութեան ակնկալութիւնները:

Սուրբեզին խիստ չափաւոր է քննադատում եւրոպական տէրութիւններին եւ, մասնաւորապէս Ֆրանսիային. նա բաւարարում է սոսկ ընդհանուր բնոյթի դիտողութիւններով: Լեմոնոնի նման, նա ձեռնպահ է մնում Հանոտոյի ընդգծուած թրքամէտ քաղաքականութեան՝ հայերի համար չարագուշակ հետեւանքների քննարկումից: Միւս կողմից, փաստօրէն, հակասելով իրեն, անվարան մատնանշում է իր իսկ հաւաստած, սոսկ խուսափողական բնոյթ կրող, արեւմտահայութեան հանդէպ սուլթանի կրաւորական դիրքորոշման փոփոխութիւնները, Հանոտոյի՝ օսմանեան զահակայի վրայ ունեցած ազդեցութեան հետեւանքով: Այս հարցում, ի դէպ, առանց քննադատական մօտեցման, նա բաւարարում է սոսկ Լեմոնոնի փաստարկների վերաշարադրմամբ:

Ի շարս Հայոց Յեղասպանութեան գործընթացի իրականացման գանազան ձեւերի, Սուրբեզին ընդգծում է, բնաջնջումից բացի, նաեւ բռնի կրօնափոխութեան երեւոյթը: Այս հարցում, սակայն, նրա մեկնաբանութիւնները տեղիք են տալիս առարկումների, քանզի կրօնափոխութիւնը նա համարում է ոչ այնքան հայերի ոչնչացման նպատակ հետապնդող երեւոյթ, որքան Օսմանեան Կայսրութիւնը քրիստոնէութեան ազդեցութիւնից դուրս բերելու եւ դրանով իսկ Եւրոպայի վերահսկողութիւնից խուսափելու յուսալի միջոց: Այս դէպքում արդէն իրեն զգալ է տալիս իրադարձութեան պատմութիւնը գլխաւորապէս դիւանագիտական յարաբերութիւնների տեսանկիւնից մեկնաբանելու նրա միտումը:

Սուրբեզիի աշխատութիւնը հիմնաւորապէս հաւաստում է համիդեան վարչակարգի կողմից պետականօրէն իրականացուած հայ ժողովրդի բնաջնջման փաստի արժանահաւատութիւնը: Սակայն, նրա հիմնական արժանիքը քննարկուող հարցադրումների վերլուծութեան ինքնատիպութեան մէջ է, քանզի նրա գրչին պատկանող թեզը միակն է Փրանսիական ընդարձակ պատմագիտական գրականութեան մէջ, որտեղ Հայկական Հարցին առնչուող հիմնախնդիրները քննարկուում են միջազգային իրաւունքի հարթութեան վրայ:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Ինչպէս տեսանք, մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում համիդեան կոտորածների հիմնահարցերի քննութիւնը ոչ միայն նիւթի ընդգրկմամբ, այլեւ գիտական վերլուծութեան խորութեամբ, անտարակոյս, գիջում է նախորդ ժամանակաշրջանի պատմաբանների աշխատանքներին: Նախ 1890ականներին, ի տարբերութիւն Ի. դարի 10ականներին, Հայոց Յեղասպանութեան գործընթացի եւ յարակից հարցերի քննական վերլուծութեանն անդրադարձել են անուանի պատմաբաններ՝ Ալբէր Վանդալը, էդուարդ Դրիօն, Անատոլ Լերուա-Բոլլիօն եւ ուրիշներ¹⁰¹, որոնց պատմագիտական ներուժն իր խոր դրոշմն է թողել նրանց աշխատանքների գիտական բարձր մակարդակի վրայ: Այս ժամանակահատուածում նման խոշոր դէմքեր նկատելի չեն:

Չնայած դրան, այստեղ քննարկուած հեղինակների աշխատութիւններն եւս արժանի են ըստ պատշաճի արժեւորումի: Դրանց, ընդհանուր առմամբ, բնորոշ են միեւնոյն թերութիւնները եւ առաւելութիւնները: Հեղինակներից ոմանք ամբողջութեամբ չեն կողմնորոշուել Հայոց Յեղասպանութեան առաջին փուլի պատմութեանն առնչուող հիմնահարցերում (Հայկական Հարցի առաջացման, Յեղասպանութեան պատճառների բացայայտման), երբեմն առաջադրել են նոյնիսկ հակասական մեկնաբանութիւններ (փաստելով հանդերձ պետական քաղաքականութեամբ հայկական կոտորածների իրականացումը, ծանրութեան կենտրոնը տեղափոխել են կրօնական առճակատման հարթութիւն եւն.), բաւարարուել եւրոպական պետութիւնների, մասնաւորապէս Փրանսիայի քաղաքականութեան չափաւոր քննադատութեամբ, Բրիտանիայի քաղաքականութիւնը մեկնաբանել կողմնակալ դիրքերից:

Այդուհանդերձ, Փրանսիացի հեղինակները, յաճախ խորամուխ չլինելով հանդերձ իրադարձութիւնների մանրամասների թուարկման մէջ, համիդեան կոտորածները մեկնաբանել են իբրեւ պետական քաղաքականութեամբ իրականացուած իրադարձութիւն, ընդգծել գործընթացի շարունակական բնոյթը, բացայայտել այն անտանելի պայմանները, որոնք առկայ էին օսմանեան լծի տակ հեծող արեւմտահայութեան համար, միաժամանակ շեշտել նրանց՝ իրավիճակի սոսկ փոփոխութեա-

նը միտուած քայլերը եւ հիմնաւորապէս հերքել հայերի՝ կարծեցեալ ապստամբութեան վարկածը: Ըստ այս ամէնի՝ մենք հակուած ենք բարձր գնահատելու այն աւանդը, որը նրանք ներդրել են Հայոց Յեղասպանութեան առաջին փուլի պատմութեան գիտական մեկնարանութեան ասպարէզում:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Ռ. Սահակեան, «Հայկական Յեղասպանութեան Պատմութիւնը Յրանսիական Հրատարակութիւններում», *Յեղասպանութեան Պատմութիւնէից*, Ռուբէն Սահակեան (խմբ.), Երեւան, Հայաստան, 1990, էջ 223-239. նաեւ՝ Մուրատ Կարապետեան, *Հայոց 1915-1916 Թուականների Յեղասպանութեան Հարցերը Հայ Պատմագրութեան Մէջ*, Երեւան, Գիտութիւն, 1999. նոյնի՝ *Հայոց 1915-1916 Թուականների Յեղասպանութեան Հիմնահարցերը Յետխորհրդային Հայ Պատմագրութեան Մէջ*, Երեւան, Հայոց Յեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտ, 2005. նաեւ՝ Նիկոլայ Յովհաննիսեան, *Հայոց Յեղասպանութիւնը Արարական Պատմագրութեան Քննական Լոյսի Ներքոյ*, Երեւան, Զանգակ, 2004:
- ² Վարուժան Պօղոսեան, *Հայոց Յեղասպանութեան Առաջին Փուլը Յրանսիական Պատմագրութեան եւ Հասարակական Մտքի Գնահատմամբ (XIX դ. վերջ-XX դ. սկիզբ)*, Երեւան, Գիտութիւն, 2005. նոյնի՝ 1909ի Հայկական Կոտորածները Կիլիկիայում Յրանսիական Պատմագրութեան Գնահատմամբ, Երեւան, Նահապետ, 2009:
- ³ A. Barre, *L'Esclavage Blanc. (Arménie et Macédoine)*, Paris, Louis Michaud, [1909], էջ 23:
- ⁴ Նոյն, էջ 25, 27-28:
- ⁵ Նոյն, էջ 27:
- ⁶ Նոյն, էջ 26:
- ⁷ Նոյն, էջ 29:
- ⁸ Նոյն, էջ 30:
- ⁹ Նոյն:
- ¹⁰ Նոյն, էջ 32-34:
- ¹¹ Նոյն, էջ 37:
- ¹² Նոյն:
- ¹³ Նոյն, էջ 38:
- ¹⁴ Նոյն, էջ 40:
- ¹⁵ Նոյն:
- ¹⁶ Նոյն, էջ 57:
- ¹⁷ Նոյն, էջ 65:
- ¹⁸ Նոյն, էջ 62:
- ¹⁹ Նոյն, էջ 59:
- ²⁰ Նոյն, էջ 26:
- ²¹ Նոյն, էջ 65:
- ²² Նոյն, էջ 63:
- ²³ Նոյն, էջ 29:
- ²⁴ Նոյն, էջ 42-43, 44-48: Այդ մասին տե՛ս՝ է. Կոստանդեան, *Մկրտիչ Քրիմեան. Հասարակական-Քաղաքական Գործունէութիւնը*, Երեւան, Զանգակ-97, 2000, էջ 253-255:
- ²⁵ Barre, էջ 54:
- ²⁶ Նոյն:
- ²⁷ Նոյն, էջ 65:

- ²⁸ Նոյն, էջ 67:
- ²⁹ Նոյն, էջ 87:
- ³⁰ Նոյն, էջ 67:
- ³¹ Նոյն, էջ 89:
- ³² Նոյն, էջ 73-74:
- ³³ Նոյն, էջ 75:
- ³⁴ Նոյն, էջ 76:
- ³⁵ Նոյն:
- ³⁶ Նոյն:
- ³⁷ Նոյն, էջ 84-85:
- ³⁸ Նոյն, էջ 86:
- ³⁹ Նոյն:
- ⁴⁰ Նոյն:
- ⁴¹ Պանգերմանիզմի գոհ- նահատակ Հայաստանը:
- ⁴² L'Abbé E. Griselle, *Une Victime Du Pangermanisme. L'Arménie Martyre*, Paris, Bloud & Gay, 1916, էջ 99:
- ⁴³ Պատմաբանների և Յեղասպանութեան՝ իրրեւ երեւոյթի մասնագէտների գերակշռող մասը գտնում է, որ Հայոց Յեղասպանութիւնը տեղի է ունեցել 1915ին, որին յաջորդել և նախորդել են համապատասխանաբար՝ համիդեան և քեմալական կոտորածները: Այլք, այդ թւում Մկրտիչ Ներսիսեանը, Եուրի Բարսեղովը, Մ. Պրանսը, Ի. Լ. Հորովիցը, այն դիտում են իրրեւ շարունակական գործընթաց, որը սկիզբ է առել 1890ականներին և աւարտին հասել 1920ականների սկզբին:
- ⁴⁴ Griselle, էջ 35:
- ⁴⁵ Նոյն, էջ 83:
- ⁴⁶ Նոյն, էջ 17-19:
- ⁴⁷ Հայոց Յեղասպանութեանը քրդերի մասնակցութեանն առնչուող հարցերի մասին մանրամասն տե՛ս՝ Եովհաննիսեան, էջ 97-111:
- ⁴⁸ Griselle, էջ 21:
- ⁴⁹ Նոյն, էջ 16:
- ⁵⁰ Նոյն, էջ 35:
- ⁵¹ Նոյն, էջ 40:
- ⁵² Այդ մասին տե՛ս՝ Պօղոսեան, Հայոց Յեղասպանութեան Առաջին, էջ 45-47:
- ⁵³ Griselle, էջ 41-67:
- ⁵⁴ Նոյն, էջ 49, 62:
- ⁵⁵ Նոյն, էջ 99:
- ⁵⁶ Նոյն, էջ 83:
- ⁵⁷ Այդ մասին մանրամասն տե՛ս՝ Պօղոսեան, Հայոց Յեղասպանութեան Առաջին:
- ⁵⁸ 1890ականներին Ֆրանսիան սիրաշահում էր Ռուսաստանին, նրան համարում իր միակ ապաւէնը, որը կարող էր օգնել Պրուսիայից վրեժխնդիր լինելու Համար: 1914ից յետոյ նրան սիրաշահելու կարիք Ֆրանսիան այլեւս չուներ, Ռուսաստանն արդէն պատերազմում էր իր հետ միասին Գերմանիայի դէմ:
- ⁵⁹ Griselle, էջ 40, 50, 65-67:
- ⁶⁰ E. Doumergue, *L'Arménie. Les Massacres Et La Question d'Orient. Conférence, Etudes Et Documents*, Paris, Foi et vie, 1916: Դժբախտաբար այդ դասախօսութեան մասին այլ տուեալներ չունենք:
- ⁶¹ Նոյն, էջ 6:
- ⁶² Նոյն, էջ 7:
- ⁶³ Նոյն, էջ 8-9:

- ⁶⁴ Նոյն, էջ 8:
- ⁶⁵ Նոյն, էջ 11:
- ⁶⁶ Նոյն:
- ⁶⁷ Նոյն:
- ⁶⁸ Նոյն:
- ⁶⁹ Նոյն:
- ⁷⁰ Նոյն, էջ 11-12:
- ⁷¹ Նոյն, էջ 12:
- ⁷² Նոյն:
- ⁷³ Նոյն, էջ 13:
- ⁷⁴ Նոյն, էջ 14:
- ⁷⁵ Նոյն, էջ 15:
- ⁷⁶ Նոյն, էջ 16:
- ⁷⁷ Joseph Denais, « La Turquie Nouvelle Et l'Ancien Régime », Conférence faite par M. Joseph Denais à Paris le 17 Novembre 1908. Annotée le 8 Mars, Paris, Marcel Rivière, 1909:
- ⁷⁸ *Խօսքը վերաբերում է, ի տարբերություն Բարձր Դռանը, Արդուլ Համիդ Բ-ի գաղափարներն ընդունած ու նրա շուրջ համախմբուած համախոհների խմբաւորմանը, որը հաստատուել էր Ելզըզի պալատում եւ 1890ականների կէսերից ի վեր իր ձեռքում կենտրոնացրել Օսմանեան Պետութեան ղեկավարման զսպանակները: Այդ մասին մանրամասն տե՛ս՝ F. Georgeon, Abdülhamid II. Le Sultan Calife (1876-1909), Paris, Fayard, 2003, էջ 148-152:*
- ⁷⁹ Denais, էջ 21:
- ⁸⁰ Նոյն, էջ 20, 21:
- ⁸¹ Նոյն, էջ 18:
- ⁸² Տե՛ս՝ Պօղոսեան, Հայոց Յեղասպանութեան Առաջին, գլուխ Ա:
- ⁸³ Եւրոպան եւ բրիտանական քաղաքականութիւնը (1882-1911):
- ⁸⁴ E. Lémonon, *L'Europe Et La Politique Britannique (1882-1911), Deuxième Édition, Revue Et Corrigée*, Paris, Félix Alcan, 1912 (գիրքն առաջին անգամ հրատարակուել է 1909ին):
- ⁸⁵ Նոյն, էջ 152:
- ⁸⁶ Նոյն, էջ 154:
- ⁸⁷ Մանրամասն տե՛ս՝ Ա. Կիրակոսեան, *Բրիտանական Դիւանագիտութիւնը Եւ Արեւմտահայութեան Անդիրը (XIX դարի 30ական թթ.-1914 թ.)*, Երեւան, Գիտութիւն, 1998, էջ 184, 189, 199:
- ⁸⁸ Պօղոսեան, Հայոց Յեղասպանութեան Առաջին, էջ 232-233. նաեւ՝ V. Poghosyan, « La Discussion de la Question Arménienne Dans la Chambre des Députés aux Années 1890 », *Բազմալէզ, Հար. ՃԿԵ.*, 2007, էջ 472:
- ⁸⁹ Այդ մասին տե՛ս՝ *Décret Réformes en Arménie – Documents Diplomatiques. Affaires Arméniennes. Projets de Réformes dans l'Empire Ottoman. 1893-1897*, էջ 155:
- ⁹⁰ F. Surbezy, *Les Affaires d'Arménie et l'Intervention des Puissances Européennes (de 1894 à 1897)* <http://www.imprescriptible.fr/documents/surbezy/>:
- ⁹¹ Այդ մասին տե՛ս՝ Պօղոսեան, Հայոց Յեղասպանութեան Առաջին, էջ 239-242:
- ⁹² Բնագիրը տե՛ս՝ *Rapport Collectif des Délégués Consulaires Adjoins à la Commission d'Enquête sur l'Affaire de Sassoun – Documents Diplomatiques. Affaires Arméniennes. Projets de Réformes dans l'Empire Ottoman. 1893-1897*, Paris, L'imprimerie nationale, էջ 96-111:
- ⁹³ Surbezy:

⁹⁴ Նոյն:

⁹⁵ Նոյն:

⁹⁶ Նոյն:

⁹⁷ Բնագիրը տե՛ս՝ « Mémorandum », էջ 45-48. նաև՝ *Projet de Réformes Administratifs à Introduire dans les Provinces Arméniennes*, էջ 48-56:

⁹⁸ Տե՛ս՝ Նոյն, էջ 71-75, 80-81, 87-94:

⁹⁹ Surbezy,

¹⁰⁰ *Décret. Réformes en Arménie*, էջ 156-162:

¹⁰¹ Տե՛ս՝ Պօղոսեան, Հայոց Յեղասպանութեան Առաջին գլուխ Բ.:

THE MASSACRES OF SULTAN ABDUL HAMID AS EXAMINED BY EARLY 20TH
CENTURY FRENCH HISTORIOGRAPHY

(Summary)

VARUJAN POGHOSSYAN

varuzhan_poghosyan@yahoo.com

The article is dedicated to the first phase of the Armenian Genocide, namely the period that extends from 1894 to 1908. It assesses the input French historiography had on shedding light on the massacres committed during Sultan Abdul Hamid's reign.

Poghosyan analyses the very few French authors who - during the era of the Young Turks - wrote about the massacres of 1894-1896 and examined their basic causes. Poghosyan assesses the writings of A. Barre, J. Denais, and Abbé E. Griselle, as well as lawyers E. Lémonon and F. Surbezy, and others who approached to the mass killings planned and organized by Hamid while writing on the Armenian genocide and/or the history of international relations. These works fall short of whatever had been achieved previously by late 19th century French historiography on both scientific analysis and the contents they cover. Nevertheless, the works discussed in this article are worth being properly discussed and evaluated accordingly. Generally these works have similar weaknesses and strengths. Some of the authors were not able to orient themselves as to how to react to the core questions of the first phase of the Armenian Genocide - particularly those which had to do with the start of the Armenian Question and the reasons of the Genocide. In certain cases they had contradicting interpretations - on the one hand they brought evidence that the massacres were the result of state policy, yet on the other hand, they put the weight of the causes on religious motives. At times they criticised French foreign policy mildly and interpreted British foreign policy in biased terms.

Having said that the French authors interpreted the Hamid massacres as a state-sponsored act, underlined the continuous nature of the process, and disclosed the impasse which the Western Armenians encountered living and suffering under the Ottoman yoke. In addition, they stressed the superficial steps taken to change these conditions and refuted the alleged rebellions of the Armenians.